Ազգ

AZG
armenian newspaper

Ա տարի, # 16, ապրիլ 10. 1991

им. А. Мясникяна
ՀՍՍՀ-Арм.С.С.Р
гос. библиотека

Ինն օրվա պայքար չորս միլիոն ռուբլու կորուստ Բորիս Ելցինի հաղթանակ

ՄՈՍԿՎԱ, 8 ապրիլի, 1991
Մեր հատուկ թղթակից ՅԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

- Այսպես կարելի է բնորոշել ՌԽՖՍՀ ժողպատգամավորների 3-րդ արտահերթ համագումարի ավարտը: Դեռ մարտի 28-ին ոչ մի քաղաքական մեկնաբան եւ անգամ ժողպատգամավոր չէր կարող գուշակել, թե 300 կոմունիստ-պատգամավորների պահանջով հրավիրված համագումարը կունենա նման ավարտ: Դեմոկրատների սկսած հաղթարշավը որոշ տատանումներով շարունակվեց մինչեւ վերջին օրը: Այդ ընթացքում հայտնվեց մի նոր պատգամավորական խումբ` «Կոմունիստները դեմոկրատիայի համար», որի ղեկավար Ա. Ռուցկոյը կոչ արեց բոլոր կոմունիստներին հրաժարվել հին գաղափարախոսությունից եւ առաջնորդվել միայն ժողովրդի շահերով: Շատերը 179 կոմունիստների այս քայլը գնահատեցին որպես բաժանում եւ նոր օպոզիցիայի ստեղծում:

«Ես կաշխատեմ ամեն ինչ անել, որպեսզի միավորեմ եւ համախմբեմ ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդին եւ նախագահությանը»,- իր եզրափակիչ ելույթում հայտարարեց նախագահ Բորիս Ելցինը: Այնուհետեւ մամլո ասուլիսում նա ավելացրեց, որ թեեւ համագումարը հրավիրող պատգամավորները ամեն ինչ արեցին, որպեսզի իրեն վարկաբեկեն եւ «զրկեն» նախագահի պաշտոնից, սակայն չկորցնելով արիությունն ու հաստատակամությունը, ինքը կարողացավ դիմադրել եւ հաղթանակով դուրս գալ ներքական պայքարից: Իհարկե, մեծ նշանակություն ունեցավ այն, որ ընդդիմադիրների «բանակը» այդպես էլ չառաջարկեց լուրջ, այլընտրական ծրագիր:

Ելցինը կլոր սեղանի շուրջ հրավիրեց երկրի բոլոր քաղաքական-հասարակական ուժերին, այդ թվում պրեզիդենտ Գորբաչովին եւ ինքնիշխան հանրապետությունների ղեկավարներին` հանուն քաղաքացիական խաղաղության եւ ազգային համաձայնության: Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, նա ասաց, որ մի խումբ ԽՍՀՄ ժողպատգամավորներ ստորագրություններ են հավաքում, որպեսզի հրավիրեն ԽՍՀՄ ժողպատգամավորների արտահերթ համագումար եւ դնեն Գորբաչովին անվստահություն հայտնելու հարցը:

«Ազգ» թերթի այն հարցին, թե ինչպես պետք է այսուհետեւ զարգանան հարաբերությունները Միութենական հանրապետությունների, այդ թվում` Հայաստանի հետ, Բ. Ելցինը պատասխանեց. **«Մենք Հայաստանի հետ պատրաստել ենք պայմանագիր եւ այն պետք է կնքենք: Թե ե՞րբ, այժմ դժվար է ասել: Պատրաստել ենք երեք պայմանագրեր Հայաստանի, Վրաստանի եւ Լիտվայի հետ եւ մոտ ապագայում կաշխատենք իրականացնել այդ դաշնագրերի կնքումը»**:

Մեր երկրորդ հարցին տված պատասխանից պարզվեց, որ նախագահ Ելցինը իր հետհամագումարյան առաջին օրը կսկսի Գերագույն խորհրդի նախագահության նիստից: Հուսանք, որ այն կդառնա սկիզբը կայունացնելու ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդում ստեղծված լարված մթնոլորտը եւ Բ. Ելցինը կկատարի իր խոստումը:

«Ես չեմ ուզում լինել շատախոս, երբ ինչ-որ բան խոստացել եմ, պետք է անպայման կատարեմ»: □

ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը Երեւանում

Հայաստանում է գտնված ԽՍՀՄ-ում Թուրքիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Վոլքան Վուրալը: Նա հանդիպումներ ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ուրիշ պաշտոնական անձանց հետ:

Մեր թղթակից Գուրգեն Խաժակյանը դիմեց դեսպանին:

ՀԱՐՑ. - **Ի՞նչ եք զգում, գտնվելով Հայաստանում:**

ՊԱՏԱՍԽԱՆ. - Ուրախ եմ, որ Հայաստանում եմ: Սա իմ առաջին այցելությունն է: Կարծում եմ, որ մեր այցելությունները պետք է լինեն ավելի հաճախակի. մենք գանք այստեղ, դուք գնաք Թուրքիա, եւ համագործակցենք իրար հետ շատ ասպարեզներում:

Հ. - **Ի՞նչ փոփոխություններ են կատարվել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, երբ համեմատենք դարասկիզբը եւ դարավերջը:**

Պ. - Մեր արտաքին քաղաքականության մեջ մեծ փոփոխություններ չկան, ավելի ճիշտ, մեր արտաքին քաղաքականությունը միշտ հիմնված է եղել Աթաթուրքի այն ըսկզբունքների վրա, թե միշտ խաղաղություն պետք է լինի ե՛ւ տանը, ե՛ւ դրսում: Սա է մեր քաղաքականությունը. մենք ուզում ենք խաղաղ կեցություն ունենալ մեր հարեւանների հետ, ուզում ենք նրանց հետ զարգացնել մեր մշակութային, տնտեսական եւ ընկերային հարաբերությունները: Ուրեմն, սկզբունքային փոփոխություն չկա: Սակայն այսօր մենք ապրում ենք մի այլ, փոփոխված աշխարհում: Շատ երկրներ գնում են դեպի ժողովրդավարություն, ազատ տնտեսություն. սա առիթ կըտա, որ ազգությունները եւ ժողովուրդները մերձենան: Մենք ոչ թե ապրում ենք բացած, այլ ազատ հարաբերությունների աշխարհում եւ, կարծում եմ, որ աշխարհում եւ Խորհրդային Միությունում տեղի ունեցող այս փոփոխությունները առիթ կըտան, որ մենք պահպանենք խաղաղ համակեցություն մեր հարեւանների հետ: □

Բորիս Գրոմովը Լեռնային Ղարաբաղում

Ապրիլի 9-ին Լեռնային Ղարաբաղ մեկնեց ԽՍՀՄ ՆԳՆ պատասխանատու աշխատակիցների խումբը ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ գեներալ-գնդապետ Բորիս Գրոմովի գլխավորությամբ:

Այցելությունը ձեռնարկվել է ԼՂԻՄ-ում եւ մերձակա շրջաններում իրավիճակի սրման կապակցությամբ:

Այցելության ընթացքում նախատեսվում է հանդիպումներ շրջանների ղեկավարների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ իրավապահպան մարմինների աշխատակիցների հետ: □

Օզալը պատասխանում է Եղեռնի եւ Քրդիստանի վերաբերյալ հարցերին

ԱՄՆ-ը կատարած այցի ժամանակ պրեզիդենտ Թուրգուտ Օզալը եղել է Հյուսիսային Կարոլինա նահանգում եւ ելույթով հանդես եկել Դյուքի համալսարանում: Ելույթից հետո ուսանողները Օզալին ուղղել են բազմաթիվ հարցեր: «*Հյուրրիյեթի*» թղթակից Սեդաթ Էրգինը նույն թերթի մարտի 29-ի համարում հաղորդում է, որ մարդու իրավունքների, Քրդիստանի անկախության եւ հայերի Մեծ եղեռնի վերաբերյալ հարցերի պատճառով համալսարանի դահլիճում ստեղծվել է լարված մթնոլորտ: Պատասխանելով համալսարանի հայ ուսանողի Եղեռնի հետ կապված հարցին` Թուրքիայի պրեզիդենտը ասել է. «*1953-ին առաջին անգամ գալով ԱՄՆ, ընկերություն էի հաստատել բազմաթիվ հայերի հետ: Նրանք նման բնույթի հարցեր երբեք չէին շոշափում: Թուրքիայի հարեւան Հայաստանն այսօր փորձում է անկախանալ Խորհրդային Միությունից: Իսկ անկախության միակ ճանապարհն անցնում է Թուրքիայի վրայով: Հայաստանի հայերը ցանկանում են բարեկամական հարաբերություններ ունենալ Թուրքիայի հետ: Մինչդեռ ԱՄՆ-ի հայերը, ապրելով հանդերձ անհամեմատ ավելի լավ պայմաններում, ոչ մի կերպ չեն հաշտվում սրանից 75 տարի առաջ տեղի ունեցած դեպքերը մոռանալու մտքի հետ: Իսկ ես այն ժամանակներում անգամ չէի ծնվել*»: Մեկ այլ ուսանող հարցրել է, թե «*Ե՞րբ եք մտադիր ազատություն տալ Քրդիստանին*»: Այդ հարցին ըստ Էրգինի, Օզալը պատասխանել է հետեւյալ կերպ. «*Ես ծնվել եմ Մալաթիայում: Հավանաբար տատս ծագումով քրդուհի էր: Ինչպես տեսնում եք (Թուրքիայում թուրքերի եւ քրդերի միջեւ) ոչ մի տարբերություն չեն դնում, չէ՞ որ ինքս հասել եմ երկրի պրեզիդենտի պաշտոնի*»: □

Մեկ միլիոնից ավելի քրդերի սպառնում է սով եւ համաճարակ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկելու է կինվորական միջամտություն կատարելու հարցը Իրաքը կտրականապես դեմ է որեւէ միջամտության

Քրդերը լքում են Իրաքը. ինչպե՞ս կանխել նրանց ողբերգությունը

Ավելի քան 2 միլիոն քրդեր լքում են իրենց տները եւ ոտքով գնում են դեպի Իրանի եւ Թուրքիայի սահմանները` պաշտպանություն խնդրելով իրաքյան զորքերի հալածանքներից եւ սպանդներից: Փախստականների անմխիթար վիճակը մեծ շարժում է առաջացրել աշխարհի բոլոր երկրներում, որոնք ուտելիք, ջուր, վրաններ, հագուստ եւ բժշկական օգնություն են ուղարկում Իրաքի հյուսիսում, Թուրքիայի սահմանի մոտ բնակություն հաստատած քրդերին: Սակայն այդ օգնությունները շատ դժվարությամբ են տեղ հասնում կլիմայական պայմանների եւ շրջանի խիստ լեռնային լինելու պատճառով. օգնության արկղերը օդանավերից գցվում են օդապարիկներով, որոնցից քչերն են տեղ հասնում, որովհետեւ օդանավերը չեն կարողանում ցածից թռչել: Սովի պատճառով զոհերի թիվը, հատկապես նորածին երեխաների, հետզհետե բազմապատկվում է:

Թրքական աղբյուրները վկայում են, որ ավելի քան 200 հազար փախստականներ են մտել Թուրքիա, սակայն նրանք ավելին չեն կարող ընդունել: Իրանի կառավարությունը բացել է սահմանները եւ պատրաստ է ընդունել մինչեւ 1 միլիոն փախստական:

Եվրոպական ընկերակցությունը մարդասիրական նպատակներով տրամադրել է 180 մլն. դոլլար` միաժամանակ նշելով, որ 5 ամսվա համար անհրաժեշտ է 480 մլն. դոլլարի գումար, որը պետք է տրամադրվի ԱՄՆ-ի եւ այլ երկրների կողմից:

Մինչ իրաքյան բանակները շարունակում են վերագրավել քուրդ ապստամբների կողմից գրավված քաղաքները, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջըրը առաջարկել է ստեղծել մի ապահով տարածք հյուսիսային Իրաքում, որտեղ քրդերը ապրեն հանգիստ, ՄԱԿ-ի զորքերի հովանավորության տակ: Ջոն Մեյջըրի առաջարկը մեծ ընդունելություն է գտել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ավստրիայի կողմից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկելու է այդ առաջարկը, հակառակ Իրաքի այն հայտարարության, որ նրանք ամեն միջոցով ընդդիմանալու են այդ քայլին, համարվելով դա միջամտություն իրենց ներքին գործերին:

Եվրոպական ընկերակցության երկրները հայտարարել են, որ Իրաքի հանդեպ որդեգրված տնտեսական շրջափակումը չի վերանա այնքան ժամանակ, քանի դեռ Իրաքում քրդերի ու շիա ապստամբների դեմ հալածանքները չեն դադարել:

ՄԱԿ-ի օրենսգետները հաստատել են, որ Իրաքում քրդերի համար ապահով տարածք սահմանելը ՄԱԿ-ի զորքերի հովանավորության տակ, մտնում է «ծնդասպանության կանխարգելման եւ պատժման օրենքի» իրավասության սահմաններին մեջ:

Մեյջըրի առաջարկը գոհունակությամբ է ընդունվել քուրդ ղեկավարների կողմից, որոնք դա անվանել են «*խիստ մարդասիրական ու անհրաժեշտ առաջարկ*»: □

Ջեյմս Բեյքըրի այցելությունը Իսրայել

Միջին Արեւելքում խաղաղություն հաստատելու աշխատանքների ծիրի մեջ Միացյալ Նահանգների պետական քարտուղար Ջեյմս Բեյքըրը Թուրքիայից անցել է Իսրայել, որտեղ տեսակցել է Իսրայելի արտաքին գործերի նախարար Դեվիդ Լեւիի, վարչապետ Մոշե Արենզի եւ այլ պաշտոնական անձերի հետ: Նա հանդիպել է նաեւ պաղեստինցի ղեկավարներին: Պետքարտուղարի այցելությունը, որը երկրորդն է մի ամսում, գլխավոր նպատակ ունի հաջողություն ապահովել պաղեստինյան հարցին եւ Միջին Արեւելքի տագնապի լուծման նվիրված համագումար հրավիրելու ծրագրին: Այդ առնչությամբ հրեա-կան իշխանությունները համաձայնվել են շրջանային համագումար հրավիրելու առաջար-կին, մինչ արաբական շրջանակները` հատկապես պաղեստինյան, եգիպտական եւ սիրիա-կան կառավարությունները, պահանջում են միջազգային համագումար հրավիրել այդ հար-ցերի քննության համար:

Սիրիայի արտգործ նախարար Ֆարուք ալ-Շարան Եգիպտոսում քննելու է նաեւ այդ հարցը, լիբանանյան եւ ծոցի հարցերին զուգահեռ: □

digitised by A.R.A.R.@

Հանրաքվե

ԱՆԿՈՐՈՒՍՏ ԵՒ ԱՆՑԱՎ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ



ՌՈՒԲԵՆ ՅՈՎՍԵՓՅԱՆ.

«Ազգ»-ի թիվ 14-ում հրապարակել էինք հարցազրույց ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ա-բրամ Սարգսյանի հետ, դրանով սկսելով «Հանրաքվե» խորագիրը:

Այսօր ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայ Հեղափոխական դաշնակցության Հայաստանի կենտրոնական կոմիտեի քարտուղար ներկայացուցչի պատասխանները մեր թղթակից ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱԿՅԱՆԻ հետեւյալ հարցերին.

1. Ո՞րն է ՀՀԴ-ի կեցվածքը սեպտեմբերի 21-ին անցկացվելիք հանրաքվեի, ընդհանրապես անկախության վերաբերյալ:

2. Մեզանում առկա է տարածված մի կարծիք. «ՀՀԴ-ն 70 տարի անկախություն էր պահանջում, իսկ 1985-ից (Գորբաչովի «գահակալության» սկզբից) հանեց մի այլ կարգախոս՝ «Անկախության ժամը չէ»: Ի՞նչ կասեիք այդ մասին:

3. Արդյոք ձեր եւ հանձինս ձեզ՝ ՀՀԴ Հայաստանի կազմակերպության կարծիքը անկախության հանրաքվեի վերաբերյալ համընկնո՞ւմ է արտերկրի կազմակերպությունների հետ, թե կան որոշ տարբերություններ:

1. Անկախության ձգտող բոլոր կազմակերպությունների նման ՀՀԴ Հայաստանի մայր կազմակերպությունը քարոզչական աշխատանքի իր ողջ ազդեցությունը պիտի ներդնի «այո» պատասխանի համար, գիտակցելով, սակայն, որ դրական արդյունքով հանրաքվեի անցկացումն անկախության գործընթացի քայլերից մեկն է ընդամենը: Թերեւս՝ անհրաժեշտ, սակայն ոչ ամենակարեւոր: Չժխտելով այդ քայլի նաեւ գործնական նշանակությունը, մենք առավել կարեւորում ենք անկախության գաղափարը կյանքի կոչելու անկորուստ եւ անցավ ուղիների որոնումը՝ թե մինչեւ հանրաքվեի օրը եւ թե հատկապես հանրաքվեից հետո: Եւ այս ուղիների որոնմանը պիտի մասնակցեն բոլոր ուժերը, բոլոր կազմակերպությունները, ողջ ժողովուրդը: Ամենայն ուշադրությամբ պիտի քննարկվեն բոլոր կասկածները, տագնապները, անհանգստությունները: Կասկածողին, տագնապողին, անհանգստացողին չպիտի որակել վախկոտ կամ ազգադավ, առհասարակ՝ հանրապետության քաղաքական մթնոլորտը հարկավոր է պարզել անհանդուրժողականության լարումից: Իրար վրա թափահարվող մատները հարկավոր է ծալել, դարձնել բռունցք: Մեզ մեծ ճակատամարտ է սպասում:

2. Ասածս անհանդուրժողականության մթնոլորտի ծնունդ է մեղադրական անսքող երանգով նման «կարծիքը», եւ դրա հերքելը եւս ավելորդ զբաղմունք եմ համարում, որովհետեւ եթե ինձ կամ որեւէ մեկին, ասենք, ամենահիմնավոր փաստարկումներով հաջողվի հերքել մեղադրանքը, միեւնույն է, ոչինչ չի փոխվի: Այն ուժն, ասենք, կամ այն մտայնությունը, որ իր խնդիրն է դարձրել «մատ թափ տալ» սրա-նրա վրա, սխալներ փնտրել ուրիշի գործունեության մեջ, մի այլ բան կհորինի՝ այս հարցազրույցն ամփոփող Ձեր լրագրի լույս ընծայման հաջորդ օրն իսկ:

Կասեմ հետեւյալը միայն. Հայ Հեղափոխական Դաշնակցության, ինչպես նաեւ բոլոր կուսակցությունների գործունեությունը գնահատելիս, պետք է կարողանալ մրտավախությունը տարբերակել ռազմավարությունից: Ձեր հարցում, որ հիմնված է «մեզանում առկա» եւ «տարածված կարծիքի» վրա, ուրիշ երկու անգամ «առկա է» մարտավարությունը ռազմավարության հետ միտումնավոր կամ միամտորեն շփոթելու «տարածված» եղանակը:

«ՀՀԴ-ն 70 տարի անկախություն էր պահանջում»-ը ռազմավարությունն է, որ «պահանջում» բառով վեր է ածվել մարտավարության եւ ըստ այդ շփոթի տպավորություն է ստեղծվում, թե ՀՀԴ-ն անցած այդ յոթանասուն տարիներին ատծո ամեն օրը պարտադրում էր Հայաստանի իշխանություններին անկախություն հռչակել:

Եւ երկրորդը:

«Իսկ 1985-ից (Գորբաչովի «գահակալության» սկզբից) հանեց մի այլ կարգախոս՝ «Անկախության ժամը չէ»:

Անծամբ ինձ ծանոթ չէ այդ կարգախոսը, բայց եթե նույնիսկ եղել է նման մրտայնություն կուսակցության մեջ, ապա մի՞թե պարզ չէ, որ եղել է որպես մարտավարություն: Ի՞նչ մի դատապարտելի բան կա պատմական այս կամ այն պահը անկախություն հռչակելու համար «ժամը չէ» ասելու մեջ: Հակառակ տրամաբանությամբ՝ բոլոր պահերն էլ հարմա՞ր են: Էլ ինչո՞ւ ենք, ուրեմն, այսքան ուշացրել: Ի դեպ, նույն տրամաբանությամբ այսօրվա դիրքերից կարելի է մեղադրել դեռեւս ՀՀՇ չդարձած «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, որոնք Անկախության հրապարակից վռնդում էին եռագույն դրոշը ձեռքներին անկախություն պահանջող Պարույր Հայրիկյանին եւ նրա փոքրաթիվ զինակիցներին: Իմ խորին համոզմամբ, ոչ «Ղարաբաղ» կոմիտեն էր սխալ եւ ոչ էլ Պարույր Հայրիկյանը: Հայրիկյանն իր պահանջով հասունացնում էր անկախության գաղափարը, «Ղարաբաղ» կոմիտեն ասում էր՝ ժամը չէ անկախության հռչակման: Անհամեմատ մեծ էր «Ղարաբաղ» կոմիտեի ազդեցությունը, անկախության նրա կոչը կընկալվեր որպես անկախության անհապաղ պահանջ: Իսկ մենք ազգովին պատրա՞ստ էինք դրան: Ջեմ էլ կարծում, թե այն օրերին այս իրողությունը չէր գիտակցում նաեւ Պ. Հայրիկյանը: Սակայն, կրկնում եմ, նա իր պահանջով հասունացնում էր անկախության գաղափարը: Նույն հանգիստ, բարեխիղճ վերլուծումով էլ, ահա, պիտի գնահատել ՀՀԴ-ի դիրքորոշումը.

3. Անկախության հանրաքվեի, ընդհանրապես անկախության գործընթացի եւ առհասարակ մեր ժողովրդի, հայրենիքի հետ կապված հիմնահարցերում Հայաստանի մայր կազմակերպության եւ արտերկրի ՀՀԴ կազմակերպությունների կարծիքները նույնն են: Այլ կերպ հնարավոր էլ չէ: ՀՀԴ բոլոր կազմակերպություններին, որքան էլ նրանք կազմակերպորեն ապակենտրոնացված են, միավորում է գաղափարական-բարոյական կենտրոնացման սկզբունքը:

Ուրիշ հարց, որ որեւէ մեկը կուսակցականներից կարող է ունենալ իր անհատական կարծիքը եւ, ուրեմն, անհատական այդ կարծիքը պետք չէ շփոթել կուսակցության կարծիքի հետ: Կուսակցության կարծիքը, ի դեպ, ձեւավորվում է ներկուսակցական քուրայում, անհատական կարծիքների, անհատական մոտեցումների քննարկումից, որ շատ հաճախ ավելի կրքոտ է լինում, առավել սուր, քան միջկուսակցական հարաբերություններում կարող է լինել: □

հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ այդ օրերին կազմակերպությունը դեռեւս չուներ իր կառույցը Հայաստանում:

Հարցի մեջ մի կիսաթաքուն մեղադրանք էլ կա՝ Գորբաչովյան քաղաքականության համակիր լինելու մեջ: Ասացեք խնդրեմ, իսկ աշխարհում եւ ԽՍՀՄ-ում այդ ո՞վ էր եւ կամ ովքե՞ր էին, որ չէին համակրում Գորբաչովին իր «գահակալության» սկզբում: Եւ ո՞վ էր, ովքե՞ր էին, որ լավագույն հեռանկարներ չէին փայփայում: Եթե մենք ավելի շուտ սկսեցինք հայհոյել Գորբաչովին, ապա պատճառը սրված, ծայր աստիճան սրված, թերեւս ժամանակից շուտ սրված արցախյան խնդիրն էր եւ ոչ այն համոզմունքը, թե Գորբաչովյան վերակառուցումը դրական առաջընթաց չէ: Իսկական հիասթափությունը (եւ ոչ միայն մեր) հասունացավ ավելի ուշ: Այս կամ այն իրադարձությունից առավելագույնս օգտվելու ազգային որեւէ կուսակցության ձգտումը, փորձը մի՞թե դատապարտելի արարք է: Ամբողջ աշխարհն է այդպես ապրում: Մենք նույնպես մտադիր ենք մտնել աշխարհ:

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ՄԵՒԱՆ

«ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ» ՊԱՀԱՆՋ

Դեռեւս մեկ տարի առաջ Սեւանի պատերազմի եւ աշխատանքային վետերանների շրջանային խորհուրդը որոշեց հեն «վերածնված» ժողովրդի օժանդակության վրա եւ քաղաքի ու նրա գյուղերի մակարդակով բարձրացնել հետեւյալ հարցը. Սեւանի շրջանի պետական բարձր պաշտոնները պետք է զբաղեցնեն տեղաբնակները: Այդ «առաջարկ-պահանջը» իր կիրառությունը աստիճանաբար ստանում էր: Բայց տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունների օրերին սկսված պրոցեսն անկում ապրեց: Վերջերս վետերանների շրջանային խորհուրդը նորից վերանայեց այդ հարցը: Նշվեց, որ այլ շրջաններից եւ հիմնականում Երեւանից եկած աշխատողների կողմից չկա հոգատար վերաբերմունք ստանձնած գործի նկատմամբ, նրանց ծառայողական մեքենաները ահագին վառելանյութ են ծախսում իրենց տեղ հասցնելու համար, ինչպես նաեւ անհարգելի պատճառներով բացակայում են աշխատանքից: Կոչ արվեց Սեւանի ավագանակցությանը ակտիվ մասնակցություն ունենալ «առաջարկ-պահանջը» վերջնական լուծելու համար:

ԵՐԵՒԱՆ

«ՅԵՂԱԿՐՈՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՅԱՑՈՒԼԸ

Անկախության հրապարակում ապրիլի 6-ից բողոքի հայացուլ է հայտարարել Շանթ Շահենի Հարությունյանը: Նա պահանջում է Հայաստանի իշխանություններից «դադարեցնել ճնշումը յեղակրոն շարժման նկատմամբ»:

«Ես նկատի ունեմ ոչ միայն մեր կազմակերպությունը, այլ յեղակրոն գաղափարախոսությունը ներկայացնողներին ընդհանրապես՝ Ալեքսանդր Վարպետյանին, Էդիկ Կակոսյանին, «Հայ դատ» կազմակերպությանը, Աշոտ Նավասարդյանին, Վալերի Միրզոյանին եւ այլն:

Ասպարեզ շտրամադրելը, անտարբերությունն արդեն իսկ կարելի է ճնշման մի ձեւ որակել: Այսօր Ելցինի մասին ավելի շատ է խոսվում ու գրվում, քան Գարեգին Նժդեհի... Գլխավերեւումս կարդում ու սարմանում են. «Ի՞նչ է սեռանրոնը»... Հետո էլ ասում են, թե վերականգնում ենք պատմության մութ էջերը:

Կոնկրետ մե՛ր կազմակերպությունը, որը չորս տարի է գոյություն ունի, միայն կոմունիստների օրոք կարողացավ թերթի երկու համար լույս տեսնել: Հիմա տպարանի տնօրենը մերժում է մեզ, թե՝ «56 թերթ ենք հրատարակում», բայց մեկնիկ հետո պայմանագիր է կնքում 57-երորդի, 58-երորդի հետ...

Մեր կազմակերպությունը չեն գրանցում, բայց դա երեւի ժամանակի հարց է: Մենք հավաքվելու տեղ չունենք՝ խոսքը ոչ թե շենքի, այլ մեկ-երկու սենյակի մասին է: Պիտի անպայման Հայրիկյանի օրինակին հետեւե՞նք:

Իշխանությունները պիտի անհատի, ազգի իրավունքները պաշտպանող միջոց լինեն, այլ ոչ թե իրե՞նց գործողություններով դառնան օրինազանցությունների առիթ ու պատճառ»:

ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՅՕԳՈՒՏ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ

Այս տարվա մարտի 1-ից Հայաստանի պատմության պետական թանգարանում գործող Հեղափոխության թանգարանը դադարեցրեց իր գործունեությունը որպես առանձին միավոր: Ապատված ողջ տարածքը այլեւս տրամադրվելու է պահոցներում ամբարված անթիվ նյութերի ցուցադրությանը: Ի դեպ, ցայսօր ցուցադրվել է պահոցների նյութերի ընդամենը 1-1,5 տոկոսը, կրկնելով այցելուին ահռելի հարստության մասին պատկերացում կազմելու հնարավորությունից:

Անշուշտ, նախաձեռնությունը մեծ օգուտ կբերի թանգարանին եւ հնարավորություն կընձեռնի կազմել այնպիսի կարեւոր ցուցադրություններ, որոնք առնչվում են գրերի գյուտի, քրիստոնեության ընդունման եւ հայ ժողովրդի պատմականորեն կարեւոր շրջանների հետ: Տնօրինությունը նախատեսում է բացել թանկարժեք քարերի, կարդերի հավաքածու ցուցադրություն-պահոց, որոնք ներկայացնում են դեռեւս բրոնզեդարյան Հայաստանը: Կազմվելու է նվիրատվությունների առանձին ցուցադրություն, հայկական տարածքային տարակների, ինչպես եւ կիրառական արվեստի նմուշների ուսուցողական կենտրոն-ցուցահանդես: □

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

— *1991 թուականի Ապրիլի 3-ին* Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց Խորհրդային Միութեան մեջ Անգլիայի արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Ռոդրիկ Բրեյթվեյթին:

Ընդունելութեան ժամանակ տեղի ունեցավ սրտաբաց զրոյց Հայաստանի ներկայ վիճակի, Հայ Եկեղեցւոյ նոր խնդիրների եւ ընդհանրապէս Հայաստանի մէջ կրօնական կարթնանքի մասին:

— *1991 թուականի Ապրիլի 3-ին* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ հայրենասէր կաթողիկոսի շիրիմին շուրջ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ Մկրտիչ Խրիմեան (Հայրիկ) երջանկայիշատակ Հայրապետի ծննդեան տարեդարձին առթիւ: Հոգեհանգիստը կազմակերպուած էր Հայաստանի Վասպուրական հայրենակցական միութեան կողմէ: Ներկա էր վանեցիների եւ հաւատացեալ ժողովրդի հոծ բազմութիւն:

Յաւարտ հոգեհանգստեան արարողութեան մասնակիցներին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տալով իր գնահատականը Հայոց Հայրիկի յիշատակը վառ պահելու համար: □

Երեւանի Նորք թաղամասի «Տիգրան Մեծ» կազմակերպության խնդիրն է ժողովրդին ծառայել՝ լինի դա սահմանների պաշտպանություն թե խաղաղ կառույց:

Ապրիլի 7-ին տեղի ունեցավ Սուրբ «Մարիամ աստվածածին» եկեղեցու հիմնաքարի օրհնումը, որը ի վերջո վերածվեց տոնախմբության եւ ճաշկերույթի:

Եկեղեցին, որ քանդվել էր նախկինում վերեւից իջեցված հրամանով, «Տիգրան Մեծի» տղաները կառուցում են իրենց հանգանակությամբ եւ սեփական ձեռքերով:

Լուսանկարային ակնարկաժը՝ Լեւոն ԱՐՄԵՆՅԱՆԻ



digitised by A.R.A.R.@

ՆԱԻՐԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՀՈՂԱԲԱԺԱՆՄԱՆ

Մրրկախառն անձրեւը հետաձգեց հողաբաժանումը Նաիրիի շրջանում, սակայն գյուղացիները նախապատրաստված էին:

Սեփականաշնորհումը իրականացնում են Նաիրիի սեփականաշնորհման եւ հողի բարեփոխման շրջանային, ավանային եւ գյուղական հանձնաժողովներում ընդգրկված ժողովրդի լիազորածները, նրանց օժանդակող շրջանային եւ գյուղական խորհուրդների պատգամավորները, գյուղական մըտավորականները: Սակայն նրանց ավելի շուտ հոգս են պատճառում, այսպես կոչված, անցյալի մեղքերը, որոնք այսօր վերների ու կոիվների փոթորիկ են բարձրացնում: Խոսքն այն մասին է, որ հեռու եւ մոտ անցյալում հանրապետության կառավարությունը շատ տնտեսությունների պատկան հողը տեղի-անտեղի հատկացրել է մյուսներին: Տարիներ առաջ այդ պատուհասից չկարողացավ խուսափել նաեւ Լուսակերտ ավանը: Տեղի բնակիչների կամքին հակառակ հողերը տրամադրվեցին Քարաշամբ, Թեղենիք գյուղերին եւ «Նաիրի» ագրոֆիրմային: Բազմաթիվ դիմումներից եւ խնդրանքներից հետո լուսակերտցիներին հաջողվեց կառավարության որոշմամբ վերականգնել սեփականաշնորհման իրենց իրավունքները: Երկարատեւ բանակցություններից հետո Թեղենիքն ու «Նաիրին» լուսակերտին վերադարձրին բռնակցված հողատարածքները: Առայժմ խլված բաժինը չի կամենում զիջել Քարաշամբը:

Շրջանային սեփականաշնորհման հանձնաժողովի անդամներ Գեղամ Միքայելյանը, Վահագն Դավթյանը եւ Ալիկ Պետրոսյանը այդ ընթացքում միշտ էլ գյուղացիների հետ են, ընդհուպ մինչեւ հողերի վերադարձնելը նրանք օգնում էին իրավական եւ մասնագիտական հարցերում: Պակաս կարեւոր չեն նաեւ շրջգործկոմի գլխավոր մասնագետների բաժինների, գյուղերի մասնագետների կատարած գործերը: Դժվար է համատարած սեփականաշնորհման պայմաններում որոշել պահեստային հողատարածքի տեղը: Հաճախ ստիպված ես լինում մեկից վերցնել հողը, հատկացնել ուրիշին, իսկ դա կատակ բան չէ: Հողաշինարարները հանդիպում են բնակիչների հետ, համոզում պետական պահեստային ֆոնդ ստեղծելու անհրաժեշտությունը: Քիչ կրքեր չբորբոքվեցին Զորավանի անասնապահական համալիրի վարելահողերը շրջանի պետական պահեստային ֆոնդին հատկացնելիս: Զորավանցիները հաստատակամորեն որոշել են սեփականաշնորհել վարելահողերը, հետո հրաժարվեցին այդ մտադրությունից:

- Բայց ինչու՞ հրաժարվեցին,- դիմում եմ Նաիրիի շրջգործկոմի նախագահ Մարութ Եգորյանին:

- Ուղղակի համոզվեցինք, որ Զորավանի համալիրը օդ ու ջրի պես հարկավոր է ողջ հանրապետությանը, գյուղմթերքների սակավություն ապրող հանրապետությանը: Իսկ վարելահողերը ենթակա են համալիրին կերային կուլտուրաներ աճեցնելու համար: Միաժամանակ բնակիչներին թույլատրեցինք վարձակալությամբ աճեցնել եւ համալիրին վաճառել կերային կուլտուրաներ:

Սեփականաշնորհման եւ հողային բարեփոխումների շրջանային հանձնաժողովի փոխնախագահ Մհերյանը հավաստիացնում է, որ կարելի է աշխատանքից զրկված գյուղատնտես մասնագետներից ստեղծել խմբեր, ովքեր ի վիճակի կլինեն ուսուցանել սեփականատերերին ոչ միայն հողի մշակման, այլեւ անասունները խնամելու, մասնավոր տնտեսավարման գործում: Սա միաժամանակ հիմնավոր պատասխան կլինի գյուղական վայրերի աշխատանքից զրկված մտավորականների արդարացի դժգոհությանը: Ասել է՝ թե խորհուրդներին կից մասնագիտական խմբերի ստեղծման անհրաժեշտությունը ունի համազգային նշանակություն: Այժմ այդ հարցը կարող է շտապ լուծման Հայաստանի կառավարության կամ խորհրդարանի մակարդակով:

Սեփականաշնորհումը շրջանում առաջինը մտավ Եղվարդ եւ Քասախ գյուղերը: Քասախում դժվարություններ կան: «Հողը չի բավարարում»,- դժգոհում են քասախցիները: Դժվար չէ հասկանալ վերջիններիս: Գյուղացիների կամքին հակառակ այստեղ բնակեցրել են հարյուրավոր փախստականների:

Քասախը սահմանամերձ լինելով Երեւանին՝ տասնամյակներով իր վարելահողերն էր զիջում քաղաքին: Գյուղի տարածքում ներկայումս գործում են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ: Այստեղի աշխատողների առկայությունը եւս բազմապատկել է գյուղի բնակչության թիվը: Արդյունքում՝ հողի սակավությունը դժվարություններ է ստեղծում բաժանման համար:

- Քասախի արդյունաբերական ձեռնարկությունները այժմ սեփականաշնորհում են բանվոր-ծառայողներին,- նկատում է գյուղի սեփականաշնորհման հանձնաժողովի նախագահի տեղակալ Տարիել Հակոբյանը: -Նրանք եւս օգտվում են հողի սեփականաշնորհումից, որքանով մեր գյուղի համայնքի անդամներն են: Հանուն սոցիալական հավասարության կարելի է նրանց սեփականաշնորհել միայն ձեռնարկությունները:

Նաիրիի շրջանի բնակավայրերում հանդիպեցի հիմնարկ-ձեռնարկությունների շատ աշխատողների, ովքեր ցանկություն ունեն զբաղվել միայն հողի մշակությամբ: Սակայն երբ գյուղի սեփականաշնորհման հանձնաժողովները պահանջում են ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը, տատանվում են. «Հողի մշակությամբ կարո՞ղ ենք հոգալ մեր կարիքները»:

Այստեղ ի՞նչն է անորոշը: Մարդը թողնում է հիմնական գործը, զբաղվում հողագործությամբ: Բայց մինչ այդ ուզում է իմանալ՝ տարեկան որքա՞ն եկամուտ է ըստանալու իր հողաբաժնից: Իսկ դա գրեթե հնարավոր չէ իմանալ, որովհետեւ պարզաբանված չէ հողի եկամտաբերի չափը: Այն հաշվարկելու կարգը չի արտացոլվել ոչ մի ենթաօրենսդրական ակտում: Քասախի գյուղխորհրդի պատգամավորներ Ռուբեն Գեւորգյանը, Սամվել Եգորյանը փորձել են հարցի պատասխանը ստանալ Հայաստանի վերադաս մարմիններում: Բայց ապարդյուն: Մնում է, որ հողի եկամտաբերի հաշվարկման կարգի մշակման արագացումով շահագրգռվի Հայաստանի կառավարությունը:

Սեփականաշնորհումը շրջանում ուրքի է հանել ժողովրդի լիազորածների, պատգամավորների, գյուղական մտավորականների կուռ ջոկատի: Դրական ամեն մի ձեռքբերում տեղի է ունենում նրանց մտքի ու եռանդի լարումով: Իսկ եթե պատահում են թերին ու դեմը, ապա նույնպես նրանց մեղքով: Եւ հատկապես նրանց մեղքով, ովքեր այս գործին լծվել են ոչ թե իրենց սրտի թելադրանքով, այլ իրենց նեղ շահադիտական ակնկալիքներով: Նաիրիի շրջկոմի առաջին քարտուղար Աշոտ Մարդոյանը եւ շրջանի դատարանի փաստաբան Հենրիկ Ադամյանը սեփականաշնորհման եւ հողային բարեփոխման շրջանային հանձնաժողովի անդամներն են: Սակայն ինչպես ասում են, անունը կա, ամանումը չկա: Սեփականաշնորհումը մոտենում է իր ավարտին, սակայն այդ ընթացքում երկուսն էլ կազմակերպչական ոչ մի գործ չեն ձեռնարկել, թեպետ դրա կարիքն զգացվում է:

Այո, սեփականաշնորհման ընթացքում նահիրցիները նաեւ տուրք են տվել թերությունների եւ բացթողումների՝ մերթ անփորձությունից, մերթ սեփականատիրական զգացումը մարդկանց մեջ վերածնելու դժվարությունից: Սակայն հայոց պետականության կերտման ճանապարհին ժողովրդին կերակրելու համար նրանք կարողացել են ստեղծել կայուն երաշխիքներ: Դրան հավանություն է տալիս ժողովուրդը:

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ԱՐՅԱԽ

— Ապրիլի 7-ին Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ գյուղում, ժամը 13-ին 30 օրով կալանվել է կուլտապրանքների խանութի վարիչ Էդիկ Խաչատրյանը եւ տարվել Շուշիի բանտ: Պատճառը հայտնի չէ:

Ասկերանի շրջանում դարձյալ նույն օրը կալանել են երկու հայի եւ տարել Բերքաձորի Ֆիլտրայիոն կետը:

Մարտունու եւ Հադրութի շրջաններում ապրիլի 7-ը անցել է առանց պատահարների:

Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում ստուգում է անցկացվել ԽՍՀՄ ՆԳՄ հատուկ նշանակության ջոկատների կողմից: Կալանվել են 2 հոգի:

ԿԱՊԱՆ

— Մարտի 31-ի գիշերը Տանձավերի ոչխարաբուծական ֆերմայից ադրբեջանական մի ավազակախումբ հերթական թալանի դուրս եկավ՝ փախցնելով շուրջ 940 գլուխ ոչխար: Կապանի եւ Կուբաթլուի ղեկավարների բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին: Կապանի շրջանային խորհուրդը մինչ այդ որոշում էր ընդունել բոլոր սահմանամերձ գյուղերի ֆերմաները դնել հսկողության տակ: Սակայն Տանձավերի տնտեսության տնօրենը բարձիթողի էր արել ֆերման: Նա, ֆերմայի վարիչը եւ հովիվները ենթարկվել են քրեական պատասխանատվության:

— Վերջին օրերին ադրբեջանական ավազակախմբերը հերթական անգամ գնդակոծեցին Կապան-Գորիս ճանապարհը: Կա մեկ զոհ: Ապրիլի 7-ին նրանք կրակ բացեցին նույն ճանապարհով անցնող ավտոշարասյան վրա: 5 հայ վիրավորվեցին: Ավտոշարասյունը պաշտպանելու նպատակով պատասխան կրակ եղավ: Միջադեպի ժամանակ սպանվեց մի ադրբեջանցի լեյտենանտ: Սա հարվածը ստացել էր թիկունքից: Այսօր Կապան-Գորիս ճանապարհը դարձել է չափազանց վտանգավոր երթեւեկության համար: Մարդատար եւ ապրանքատար գնացքները Կապան չեն ժամանում անապահովության պատճառով: Կապանի եւ շրջանի բնակչությունը խիստ անհանգստացած է: Ինչքա՞ն կարող է այսպես շարունակվել:

— Կապանի շրջանային հիվանդանոցում տեղադրվեց ճապոնական մակնիշի ուլտրաձայնային ախտորոշման ապարատ, որն անփոխարինելի է մի շարք հիվանդությունների ճշգրիտ ախտորոշման գործում՝ առանձնապես լյարդի, լեղապարկի, ենթաստամոքսային գեղձի, երիկամների, ուռուցիկական եւ կանայի հիվանդությունների: Այն շրջանային հիվանդանոցում տեղադրելը խիստ անհրաժեշտ էր Կապանի, Քաջարանի եւ Մեղրու շրջանների բնակչությանը: Կապանի շրջանի հիվանդանոցի գլխավոր բժշկի բուժգծով տեղակալ Վլադիմիր Արզումանյանը տեղեկացնում է, որ Հայաստանի առողջապահության նախարարության թիվ 1894, 14 հուլիս, 1989 թվի որոշմամբ Կապանում պետք է ստեղծվեր ախտորոշման միջշրջանային կենտրոն: Սակայն անհայտ պատճառով մնացած շրջաններում այն ստեղծվել է, իսկ Կապանում՝ ոչ: Կապան քաղաքը գրեթե շրջափակման մեջ է, եւ թվում էր, թե պետք է առաջին հերթին նրա վրա ուշադրություն դարձնեին:

ՍՊԻՏԱԿ

Նրանք բռնագաղթվել են Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Խաչակապ գյուղից: Իրենց եղբայրների ու քույրերի հետ կիսում են երկրաշարժից հետո բաժին ընկած դժվարությունները ու հողը շենացնելու բերկրանքը: Նախկին ադրբեջանաբնակ Սարալ գյուղի 200 ընտանիքների 90 տոկոսը խաչակապցիներ են: Հողագործությունից բացի նրանք աշխատում են նաեւ գյուղը վերականգնող շինարարական կազմակերպություններում, իսկ կանայք՝ գյուղում գործող կարի ֆաբրիկայում եւ տնտեսությունում: Սարալցիներից 141-ն արդեն ընդգրկվել են գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում: Նրանք շուտով կստանան նաեւ հողաբաժիններ... եւ բերկրա հող, քո իսկական տերերի ջերմ շնչառությունից: □

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՃԱՆՐ ԾՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի հարավ-արեւելյան մասում է փռված Պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա գավառի մաս կազմող այժմյան Մարտունին: Շրջանը համեմատաբար բարենպաստ կլիմայական պայմաններ ունի:

Ի տարբերություն անտառազուրկ, խիստ սակավաջուր, չոր կլիմայով արեւելյան մասի, շրջանի արեւմտյան նախալեռնային ու լեռնային հատվածը գեղատեսիլ է, հարուստ պտղատու ծառատեսակներով, անտառներով, զուլալ գետակներով եւ սառնորակ աղբյուրներով: Մարտունու շրջանի ընդերքը հարուստ է մարմարի, կրաքարի, գրանիտի պաշարներով: Մարտունու շրջանը մարզի հացի շտեմարանն է: Բացի հացահատիկից այստեղ շատ է նաեւ խաղողը, բանջարանոցային կուլտուրաները եւ պտղատու այգիները, մեղենն ու կաթնամրթերքները: Մարտունու շրջանը արցախյան շարժման առաջին դրոշակակիրն էր: Գուցե հենց այդ պատճառով ադրբեջանական իշխանությունները տնտեսական ու քաղաքական ուժեղ ճնշում են գործադրում նրա վրա: Շրջանի քառասուն բնակավայրերից լոկ չորսն են ադրբեջանաբնակ, սակայն փոխարենը երկու կողմից սահմանակից է Աղդամի եւ Ֆիզուլու ադրբեջանական շրջաններին, եւ պարբերաբար ենթարկվում է թալանի, շրջափակումների ու վայրագությունների:

Ադրբեջանական ՕՄՕՆ-ականները, որոնք պարետային զինվորական մարմինների թույլտվությամբ տեղավորվել են Խոջավանդ (կպած է Մարտունուն), Ղարադաղլու (տեղավորված է Մարտունի Ստեփանակերտ խճուղու վրա, Կաղարծի գյուղի մոտ), Ամիրալար եւ Վերին-Վեյսալի ադրբեջանական քոչվորներից մնացած տեղավայրերում, չորս կողմից շրջափակել են շրջկենտրոնի մոտակա գյուղերը եւ նույնիսկ ցերեկային ժամերին այնտեղ հասնելու համար մարդիկ շրջանցող ճանապարհներ են որոնում: ՕՄՕՆ-ականները օրը ցերեկով շրջում են ավտոմատ հրազենով, առանց թաքցնելու դրանք ներքին զորքերի ստորաբաժանումների զինվորներից, իսկ շրջանի ներքին գործերի հայ ծառայողները զրկված են զենք կրելու հնարավորությունից, էլ չենք խոսում, որ շրջանի բնակիչներից վաղուց արդեն բռնագրավված են որսորդական հրացանները: Ստացվել է այնպես, որ հրազենին պետք է պատասխանել միայն բարոյախոսական քարոզներով: Վերջին ամիսներին շրջանը տրվել է քսանից ավելի զոհեր, բոլորն էլ երիտասարդ, որոնք ընդդիմացել ու չէին թողել, որ թալանվեն գյուղերն ու անասնապահական ֆերմաները:

Գիշերային գրոհներից եւ հարձակումներից արդեն բզկտվել են Մյուրի-շեն, Ավդուռ, Հացի, Նոր-շեն, Սոս եւ այլ գյուղեր: Ադրբեջանական բաշիբոզուկները, ավտոմատ հրազենով եւ հրացաններով զինված, հարձակվում են անասնապահական ֆերմաների վրա, սպանում պահակներին, գողանում հոտը, իսկ ներքին ծառայության ստորաբաժանումները շրջկենտրոնում արտակարգ դրություն են սահմանել եւ փաստորեն ապահովում են այդ թալանը:

Այդպես թալանվեց Մյուրի-շենի կովերի ֆերման: Զորս ավտոմատավոր հարձակվեցին պահակ Ռ. Մեժլումյանի վրա ու տարան կոլտնտեսության ունեցած 60 կովերի կեսը: Այդպես եղավ նաեւ Սոսում, երբ հրոսակները սպանեցին պահակներից մեկին, իսկ մյուսը մինչեւ հիմա անհայտ կորած է:

- Երբ բողոքում ենք շրջանի պարետին, նա պատճառաբանում է, թե անձնակազմը (մոտ 180 զինվոր) քիչ է, մարդիկ չեն հերիքում, ուստի դրությունը վերահսկել անհնար է,- ասում է շրջանի կուսկոմիտեի առաջին քարտուղար Օ. Եսայանը:- Ստեղծված իրավիճակը շատ է հուզում շրջանի ղեկավարներին, սակայի ի՞նչ անենք: Նրանք անզոր են պետականորեն կազմակերպված հանցագործությունները կանխելու համար: Մարտունու ներքին գործերի շրջանային վարչությունը ամեն ինչ անում է դրության տերը դառնալու համար: Սակայն, միպետ Գաբրիելյանի խոսքերով ասած, սա կազմակերպված է «բարձր մակարդակով» եւ գործնականում վերահսկել անհնար է:

Շրջանում արդեն սկսվել են գարնանային աշխատանքները.

- Ինչպե՞ս ստիպես մարդկանց աշխատել սահմանամերձ գոտիներում, երբ ամեն վայրկյան նրանց կյանքին վտանգ է ըսպառնում,- ասում է շրջգործկոմի նախագահ Ս. Սեյրանյանը:

Լեւոն ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ուղղում

Նախորդ համարի 2-րդ էջում տպագրված «Էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի ճակատագիրը Հանրապետությունում» հոդվածում առաջին սյան ներքեւից 3-րդ տողում «... էներգատար արդյունաբերության» փոխարեն կարդալ «... քիչ էներգատար արդյունաբերության»

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ վիճակի մէջ են ռումինահայերը Չաուշեսկուի վարչակարգի տապալումից՝ մէկ տարի հետո: Արդյոք նրանք կազմակերպված հասարակական կյանքո՞վ են ապրում: Ի՞նչ են մտածում ապագայի մասին: Ինչպիսի՞ կապերի մէջ են Հայաստանի հետ: Այս եւ նման շատ հարցեր ուղղեցինք Ռումինիայի Խորհրդարանի պատգամավոր, Ռումինահայ միության նախագահ Վարուժան Ոսկանեանին, որը երկու շաբաթով գտնվում էր Ֆրանսիայում:

ՀԱՐՑ - Պրն. Ոսկանեան, դուք Ռումինիայի խորհրդարանի պատգամավոր եք, միաժամանակ Ռումինիահայ միության նախագահ, Ֆրանսիայում մնալու եք մինչեւ մարտի 20-ը: **Ի՞նչ նպատակներ է հետապնդում ձեր այցը:**

ՊԱՏԱՍԽԱՆ - Ամեն անգամ, երբ այցելում ենք որեւէ օտարերկրյա համայնք, մեր նպատակն է սերտացնել կապերը դրանց հետ, ճանաչել հայերին եւ նրանց միությունները:

Ինձ համար ֆրանսահայ համայնքը ամենեւին էլ անծանոթ չէ. մեզ մոտ՝ Ռումինիայում, կարդում ենք ձեր թերթերը, շատ մոտիկից հետեւում ձեր համայնքի կյանքին: Այցիս ընթացքում ուզում եմ ճանաչել ֆրանսահայ կազմակերպությունները, մասնավորապես Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը, եւ, որպես ռումինական խորհրդարանի անդամ հանդիպել ֆրանսիացի իմ գործընկերների հետ:

Այնպես որ, Բարեգործական եմ եկել՝ բավականին իրազեկ լինելով նրա մասին: Հանդիպել եմ նրա նախագահ Քեռաբչյանի հետ եւ համաձայնության ենք եկել, որ ռումինահայ գաղութի հետ ամուր եւ երկարատեւ կապերի հաստատումը մտնելու է ՀԲԸՄ-ի ծրագրերի մէջ, փայփայելով այն իդեան, թե մի օր Բարեգործականի մասնաճյուղ կստեղծվի Ռումինիայում, քանզի ՀԲԸՄ-ն եւ Ռումինահայ միությունը ընդհանուր շատ բան ունեն:

- Դուք Ռումինահայ միության նախագահն եք, ի՞նչ կասեիք այդ գաղութի մասին: Կարելի՞ է ասել, որ ռումինահայերը կազմակերպված հասարակական կյանքով են ապրում:

- Ռումինահայ գաղութը Եւրոպայում ամենահներից է: Առաջին հայ գաղթականները Ռումինիայի հողի վրա ոտք են դրել դեռ 967 թ., այսինքն՝ 1000 տարի առաջ: Երկու-երեք դար հետո մեծաթիվ հայեր եկան Լեհաստանից եւ միասին մարմին ու շունչ տվեցին այս գաղութին, որ բարգավաճեց դարեր շարունակ:

1915-ի ցեղասպանությունից հետո հայ փախստականների հսկայական հոսք եղավ Ռումինիա. ռումինական վարչակարգը չափազանց բարյացակամորեն մոտեցավ ցեղասպանությունից փրկվածների նկատմամբ, որոնք մեծ մասամբ Նանսենի անձնագիր էին կրում: Երկրորդ համաշխարհայինից առաջ ռումինահայ գաղութը հասավ 60-70 հազարի:

Այսօր, դժբախտաբար, մենք նվազելով հասել ենք 10 հազարի եւ ապրում ենք բացառապես քաղաքներում: Դրանք մեծամասամբ մտավորականներ են. աշխատող բնակչության (25-60 տարեկան) 90 տոկոսը համալսարանավարտ են: Մինչեւ հիմա, համայնավար կարգերի օրոք, մեր հայրենակիցները համախմբված էին եկեղեցու հովանու շուրջ: Մենք աշխարհիկ կազմակերպություններ չունեինք, դրանք արգելված էին կառավարության կողմից: Միայն անցյալ տարի Ռումինահայ միությունը վերսկսեց իր գործունեությունը, եւ

ՀԱՅԵՐԸ ՆՈՐ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Հարցազրույց Ռումինահայ միության նախագահ, Ռումինիայի Խորհրդարանի պատգամավոր ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆԵԱՆԻ հետ

սկիզբ դրինք կազմակերպված հասարակական կյանքին: Մենք փորձում ենք ներկա լինել հայերի առօրյա կյանքում՝ նրանց համայնքի ծոցում պահելու համար: Կյանքը Ռումինիայում այնքան է ծանրացել, որ հնարավոր չէ սոսկ հոգեւոր աջակցությամբ կարիքավոր մարդկանց ցավին հասնել:

Այդ անելու համար մենք բաժանմունքներ ենք ստեղծել երկրի տարբեր շրջաններում. Բուխարեստում ապրում են մոտ 2-3 հազար հայ, Կոստանցայում՝ 1000-ից ավելի, Տրանսիլվանիայում էլ քիչ հայեր չկան՝ մեծամասամբ կաթոլիկ: Սրանք նույնիսկ, եթե խառնվել էլ են հունգարացիների հետ, չեն ժխտում իրենց հայությունը:

Առ այսօր, ստեղծել ենք երեք հանձնախումբ՝ տնտեսական, բժշկական եւ մշակութային: Սակայն այս պահին կարեւոր է տնտեսականը, քանզի առանց տնտեսական ամուր հիմքի մենք չենք կարող հասնել մեր մնացյալ նպատակներին:

Այս հանձնաժողովի մէջ կան մարդիկ, որոնք արդեն հատուկ ուսումնասիրություններ են կատարել եւ այսօր ձեռնարկատերեր են: Պետք է այս մարդկանց մի տանիքի տակ հավաքել, խրախուսել, որ իրար օգնեն, եւ լավ կլիներ, որ նրանք իրենց շահույթից մի փոքր մաս առանձնացնեին Միության գանձարկղին: Այսպիսով մենք կարող էինք հասարակական գործունեություն ծավալել երկրի ներսում եւ հավաքյալներ մասնակցե՞լ են 89-ի դեկտեմբերի իրադարձություններին: Լավ, գիտեք, որ ազատության առաջին զանգը հնչեցնողը հայկական եկեղեցին էր: Առավոտվա ժամը 8-ից եկեղեցին բացեց իր դռները եւ հնչեցնում էր զանգերը մինչեւ Չաուշեսկուի փախչելը, որը դեռեւս այդ ժամին գտնվում էր իր նախագահական պալատում: Մենք նույնիսկ ֆիլմ ենք նկարահանել, ուր կարելի է տեսնել, թե ինչպես են ռումինացիները հայկական եկեղեցի մտնում, ծունկ չոքում եւ խաչակնքում:

Իմիջիայլոց, ես նույնպես մասնակցել եմ այդ հեղափոխությանը, եւ նույնիսկ ձերբակալվել, մնկուկես օր մնացել բանտում: Բարեբախտաբար Չաուշեսկուն փախավ, թե չէ հերթով կսկսեին հարցաքննել ու, աստված գիտե, թե ինչ կպատահեր...

Սկզբում երեք հայ ներկայացուցիչ կար Ազգային Միության ժամանակավոր խորհրդի կազմում՝ «Նոր կյանք»ի գլխավոր խմբագիր Սարգիս Սելյանը, երիտասարդ ինժեներ Նշան Պողոսյանը եւ ես:

Սա շատ օգտակար մի բան էր, քանզի այսպիսով մենք կարող էինք մեր պահանջները ներկայացնել եւ դրանք բավարարել. խորհրդարանում մեկ տեղ հատկացնել, դպրոցները վերաբացել, հարաբերություններ հաստատել Հանրապետության նախագահության՝ ասել է թե նոր վարչակարգի հետ: Մենք ելույթներ ունեցանք հեռուստատեսությամբ, ռադիոյով, դա մեզ հնարավորություն տվեց ծանոթացնել հայերին եւ նրանց մշակույթը:

Ինչո՞ւ էր այդքան կարեւոր խորհրդարանում մեկ տեղը: Որովհետեւ հայերը կարող են հավաքվել այդ անձնավորության շուրջը, նա համայնքը միավորողի դերը կխաղա:

Նվազ քանակի պատճառով, խորհրդարանում մենք կորդեգրենք չեզոք դիրք: Սակայն միշտ զգաստ ենք լինելու, պատրաստ՝ վեր հանելու մարդու իրավունքների յուրաքանչյուր ոտնահարում:

Ինչ վերաբերում է 89-ի դեկտեմբերի իրադարձություններից հետո համայնքի տեղաշարժերին, կարող եմ ասել, որ հայերը կրկին հպարտ են զգում, որ հայ են: Շատերն են գալիս մեզ տեսնելու եւ արտասվախառն ասելու, որ հայ են:

Պետք է ասել, որ համայնքը ստվարանում է: Եւ եթե ոմանք, հատկապես երիտասարդները, նախընտրում են մնկնել, դա սահմանափակ երեւույթ է: Այսօր Ռումինիայում, չնայած կենսապայմանները ծանր են, հնարավորություն կա դրանցից դուրս գալու, եթե, իհարկե, ձեռներեց ես:

- Ռումինահայերը օգնե՞լ են ծանր վիճակի մէջ ընկած Հայաստանին: Այս ուղղությամբ ի՞նչ կոնկրետ գործողություններ են արվել:

- Հայաստանին օգնելու համար մենք, բացի մարդկային ուժից, ոչինչ չենք կարող առաջարկել: Այս պատճառով էլ այդ հարցը քննարկեցինք ՀԲԸՄ-ի եւ հայկական այլ կազմակերպությունների հետ, որ եթե նրանք Հայաստան օգնություն են ճանապարհում, մեր կողմից՝ կարող ենք ուղարկել մասնագետներ (բժիշկներ, ճարտարապետներ եւ այլն...):

Հետո, երկրորդ փուլում, կարող էինք եռանկյունի կազմել. դուք այստեղ փող եք հավաքում, մենք՝ ապրանք ենք գնում եւ ճանապարհում, ինչը շատ ավելի էժան կնստի Ռումինիայում:

Ռումինահայ գաղութը ավելի մոտ է Հայաստանին, այդ պատճառով էլ նա կարող է մեզ բոլորիս Հայաստանին կապող շղթայի վերջին օղակը լինել:

Ինչ վերաբերում ինձ, եկող ամսին ես հրավիրված եմ Հայաստան, ուր հանդիպելու եմ դեկավար շրջանակների հետ՝ քննարկելու եւ որոշելու, թե կոնկրետ ի՞նչ պետք է անել Հայաստանին օգնելու համար:

Հարցազրույցը վարեց
Վարուժան Մարտիկյանը
Bulletin Infos UGAB, 30.III.1991

ՉԱՏԿՈՒԱՆ ՏՕՆԸ ՍՐԲ. ՎԱՐԴԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Թղթակցութիւն Նյու Յորքից

Կիրակի, մարտի 31-ին Ցիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնը ողջունեցաւ հազարաւոր հաւատացեալներու կողմէ, Նյու Յորքի գեղակերտ Ս. Վարդան Մայր տաճարին եւ անոր շրջափակին մէջ:

Խուռներամ հաւատացեալներ փութացեր էին Մայր տաճար՝ հաղորդուելու յարութեան ոգիով, ունկնդրելու Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամեանի պատգամը եւ ունկնդրելու հոգեւոր երաժշտութեան անզուգական մեկնաբան Լուսինէ Զաքարեանի հոգեպարար երգեցողութիւնը:

Առաջնորդ Սրբազանի հրաւէրով, հայրենի ծանօթ արուեստագիտուհի եւ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբի մենակատարուհի Լուսինէ Զաքարեան Նյու Յորք ժամանեց՝ իր մասնակցութիւնը բերելու համար Աւագ շաբաթուան արարողութիւններուն:

Նախապէս եղած ծանուցումները հասարակութիւնը տեղեակ պահեցին Լուսինէ Զաքարեանի ներկայութեան մասին: Արդարեւ, բազմահարիւր հաւատացեալներ ներկայ գտնուեցան Աւագ հինգշաբթի, Աւագ ուրբաթ օրերու արարողութիւններուն եւ Հոգեգալոյցի պատարագին, եւ հոգեպէս վերացան տաղանդաւոր արուեստագիտուհիին բացառիկ արուեստով:

Ս. Զատկուան արարողութեան երգեցողութիւնը կատարեց արաջնորդարանի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ դոկտ. Արքը Միսեպի, երգեհոնի նուագակցութեամբ միջազգային ծանօթ երգեհոնահար Պերճ Ժամկոչեանի եւ մենակատարութեամբ Լուսինէ Զաքարեանի:

Ս. Պատարագի ընթացքին, պատարագիչ Գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամեան, որպէս գնահատութիւն Ս. Վարդան Մայր տաճարի լուսարարապետ Հոգշ. Տ. Բարգէն վրդ. Անուշեանի եկեղեցանուէր ծառայութեան, անոր շնորհեց ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք:

Առաջնորդ սրբազան հայրը, որուն Ս. Զատկուան անդրանիկ պատարագն էր որպէս առաջնորդ, իր ոգեշնչող պատգամը

փոխանցեց ներկայ հաւատացեալներուն եւ արեւշատ ու բաջառողջ կեանք մաղթեց Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Հայրապետին:

Ցաւարտ Ս. պատարագի, Մայր տաճարի շրջափակին մէջ տեղի ունեցաւ 12 աղաւնիներու աւանդական արձակումը, որ կը խորհրդանշէ Քրիստոսի 12 առաքեալներուն «արձակումը» ամբողջ աշխարհին աւետարանելու համար: Այս տարի երկու յաւելեալ աղաւնիներ արձակուեցան՝ ի յիշատակ 1988 թուականին տեղի ունեցած երկրաշարժի զոհերուն եւ որպէս խորհրդանիշ Ղարաբաղի հայրենակիցներու արդար պայքարին:

Ներկաները աջահամբոյր կատարեցին եւ առաջնորդ սրբազան հօրմէ ստացան նշխար եւ յուշանուէր:

Կրօնական այս արարողութեան եւ աղաւնիներու արձակման արձագանգ հանդիսացան ամերիկեան մամուլն ու պատկերասփիւռի կայանները:

Ս. Զատկուան ընտանեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ տօնականօրէն զարդարուած առաջնորդարանի «Հայկ եւ Ալիս Գավուքճեան» հանդիսասրահին մէջ: Ներկայ էին հոգեւորականներ, Լուսինէ Զաքարեան, Պերճ Ժամկոչեան, խումբ մը հայրենի բժիշկներ, Հայաստանի «Հայֆիլմի» անձնակազմի անդամներ եւ աւելի քան 400 հոգի: Նախ քան ճաշկերոյթը Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց տնօրինէքի արարողութիւն: Շնորհաւորեց Ս. Զատկուան տօնին առթիւ տօնակատարուող անունները եւ յուշանուէրներ յանձնեց անոնց:

Ներկաներու ջերմ փափաքին ընդառաջելով Լուսինէ Զաքարեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Պերճ Ժամկոչեանի, ներկայացուց փունջ մը հայկական երգեր, արժանանալով բոլորին ջերմ գնահատանքին:

□

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ՔՈՒՎԷՅԹ

Մարտի 13-ին, Քուվեյթի հայոց կաթողիկոսական փոխանորդ՝ Օշական Ծ. վրդ. Չոլոյան Միայյալ Նահանգների արտաքին նախարարության միջոցով կարողացել է հետեւյալ հաղորդագրություն փոխանցել Մեսրոպ արք. Աղջայանին.

«Հայ համայնքի բոլոր անդամները եւ ես այժմ կյանքի լավ պայմաններու մէջ կգտնվինք: Համայնքի անդամներուն պատկանող տուներ կամ նյութական այլ ձեւի սեփականություններ չեն վնասված: Այժմ կապրինք ավելի ապահով կյանքի ներքեւ: Կհուսանք, որ կացությունը հետզհետե ավելի բարելավվի եւ պիտի վերագտնենք մեր բնականոն կյանքը: Եկեղեցին եւ դըպրոցը ոչ մեկ վնաս կրած են: Եկեղեցվո մէջ արդեն վերսկսած ենք կատարել կըրոնական արարողություններ»:

ԹՈՒՐՔԻԱ

Ասմարի թաղամասի «Հրաչյա Աճառյան» սրահում, մարտի 17-ին, տեղի է ունեցել Սահակյան սանուց միության կողմից կազմակերպված «Շնորք Արք. Գալուստյան» մրցույթի մրցանակաբաշխությունը: Ցուցադրության էին դրվել ուղարկված գործերից նմուշներ նկարչություն, լուսանկար, երգիծանկար, բանաստեղծություն եւ արձակ: Երեկոյի բացումը կատարել է սանուց միության անդամներից Անանա Թուրայը, ապա ելույթ է ունեցել «Մարմարա» թերթի խմբագրապետ Ռոպեր Հատտեճյանը: Մրցանակակիրները ստացել են Շնորք պատրիարքի կիսանդրիներ եւ դրամական պարգեւներ:

ԲԵՅՐՈՒԹ

Մարտի 8-10 Բեյրութում հայուրախաղերով հանդես է եկել Համազգային ընտանության Հալեպի «Զվարթնոց» երգչախումբը, ղեկավարությամբ հայրենի երգահան եւ խմբավար Խորեն Մեյխանեճյանի: Կոմիտասի, Եկմալյանի, Կանաչյանի եւ շատ ուրիշների ստեղծագործությունները մեծ ընդունելություն են գտել լիբանանահայ գաղութի կողմից:

«Հառաջ»

digitised by A.R.A.R.@

Դեռ 1989-ին Լոս Անջելեսում Մերուժան Տեր-Գուլանյանի հետ զրույցի ժամանակ, որը տպագրվեց «Գարուն» ամսագրում ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆԸ որոշ թեականությամբ արտահայտվեց Ռամկավար ազատական կուսակցության մասին. «Լավն են, բայց դե...«միշտ հայրենի կառավարության հետ»: Վերջերս, «2+1» հնգաստամենյային հաղորդման ժամանակ գույները ավելի խառացվեցին. «Ռամկավարները 70 տարի սիրաբանել են բոլշևիկների հետ»:

Այս եւ նմանօրինակ հայտարարությունները հիմնավորելու, փաստարկելու խնդրանքով մեր սեփական թղթակից Աննա Խաչատրյանը դիմեց Ազգային Ինքնորոշում Միավորման նախագահ, Գերագույն խորհրդի պատգամավոր Պարույր Հայրիկյանին:

Ես ինքս ժողովրդավար եմ եւ գտնում եմ, որ ժողովրդավարությունը կամ որեւէ

Պ. ՀԱՅՐԻԿՅԱՆԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՌԱԿ-ԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ժողովրդավարական կուսակցություն ցանկացած ազգի մեծագույն հարստություններն են:

Մեր ազգի ապագան ես տեսնում եմ ռամկավարական գաղափարների հաղթանակով պսակված, որովհետեւ դրա՛նք պիտի ցանկացած հայ անհատի ազատ ու անկախ, հզոր մարտիկ դարձնեն: Ժողովրդավարությո՛ւնը պիտի Հայաստանը դարձնի հզոր անհատների հայրենիք:

Սրանից էլ բխում է իմ դրական վերաբերմունքը մեր Ռամկավար ազատական կուսակցությանը: Վերջերս Ամերիկայում հաճույքով հանդիպեցի ՌԱԿ-ի ղեկավարների հետ:

Բայց այլ բան է ռամկավար ազատական լինել անունով եւ այլ՝ էությամբ, ըստ կզրունքորեն, խորապես: Ցավոք սրտի՝ կուսակցության շարքերում շատ քիչ են այդպիսիները՝ կարելի է նրանց անուն առ անուն թվել: Որպես անհատ իսկապե՛ս ռամկավար գաղափարների կրողները, ինչպես օրինակ՝ բժիշկ Գրիգոր Գրիգորյանը Լոս Անջելեսից, ՌԱԿ-ի շարքերում բացառիկ կերպարներ են:

Հետո պիտի ուշադրություն դարձնենք այս 70 տարիներին Ռամկավար ազատական կուսակցության դիրքորոշմանը, քաղաքականությանը: Արդյոք ՌԱԿ-ն իսկապե՞ս պայքարել է իր գաղափարների համար Հայաստանում... Իհարկե, ամբողջությամբ չի կարելի բացառել, որովհետեւ համենայն դեպս պարբերականները, մասնավորապես «Զարթոնք»ը, հասնում էին այստեղ եւ դրանց միջոցով էր բռնատիրության ճիրաններում գտնվող հայ ժողովուրդը հասու որոշ ազատական գաղափարների: Բայց դրանք ՌԱԿ-ի քաղաքական գործունեության, պայքարի հիմքում ընկած չեն:

Նույնիսկ այս օրերին էլ ՌԱԿ-ը դեռեւս ազատական պայքարի չի անցել: Առայժմ կուսակցությունը փորձում է Հայաստանում «արեւի տակ տեղ» գտնել: Ու շարունակվում, մնում է նախկին մոտեցումը, դիրքորոշումը: Ժամանակին էլ «հայրենասիրություն», «հայասիրություն» ասելով ՌԱԿ-ը հասկանում էր միայն «հայրենի կառավարասիրություն»... Իսկապես, սիրաբանում էին բոլշեւիկների հետ՝ իշխանության գըլխին նրանք էին, իսկ թե ինչպես էին այն նվաճել՝ չէր հետաքրքրում:

Այսօր այն տպավորությունն ունեմ, որ ՌԱԿ-ը չի կողմնորոշվել. քննադատական խոսքի, սկզբունքային մոտեցման չես հանդիպի ոչ ՌԱԿ-ի պարբերականների էջերում, ոչ էլ քաղաքական գործիչների հետ հանդիպումներում:

Կոնկրետանամ: Քանի՝ որ, արմատականությանը զուգընթաց՝ ԱԻՄ-ը ռամկավարությունը համարում է նաեւ ի՛ր էությունը, ՌԱԿ-ին քաղաքական լայն առումով համագործակցելու առաջարկ արվեց՝ այս անգամ մեր կողմից: Ի դեպ, ոչ թե հանուն ինչ-ինչ նպատակների, այլ՝ ազատականության ու ժողովրդավարության կարեւորագույն սկզբունքների: Թվում էր, թե պիտի ընդառաջ գային, բայց... ոչ մի գործնական շարժում: Սրա պատճառը, կարծում եմ, բխում է էլի՝ ՌԱԿ-ի «իշխանասիրությունից»՝ լավ հարաբերություններ պահպանել այն կառավարության հետ, որն այսօր է երկիրը կառավարում: Բայց կարող է վաղն իշխանությունն Ազգային Ինքնորոշում Միավորմանն անցնել եւ այն ժամանակ կհիշենք, որ ռամկավարներն անսկզբունք են: ԱԻՄ-ն աճող ուժ է: Կասկածները փարատեցին հասարակական կարծիքի վերջին հարցումները: ԱԻՄ-ի օգտին այսօր պատրաստ է քվեարկելու հարցման ենթարկվածների, նույնիսկ նվազեցրած տվյալներով, 40 տոկոսից ավելին... Այսօրվա իշխանություններն էլ նույնպես պիտի հիշեն Ռամկավար ազատական կուսակցության սկզբունքայնության ընդունակ չլինելը:

Ես սա ցավով եմ ասում, որովհետեւ կուզեի, որ ռամկավարները նաեւ արմատական լինեին, որպեսզի սոցիալիստները, կոմունիստները կամ ինչ-որ այլ օտարածին, հակաժողովրդական «իստներ» ասպարեզ չգային: Որ Հայաստանում չհնչեին այնպիսի հայտարարություններ, թե իբր բռնակալական կարգերի հաստատումը, բռնատիրությունը կարող է մեր ապագայի համար նպաստավոր լինել... Այսպիսիների ճանապարհը փակելու միակ միջոցը ռամկավարության հզորացումն է, իսկ անսկզբունքայնությամբ, անողնաշարությամբ երբեւէ՛, որեւէ՛ քաղաքական կուսակցություն արեւի տակ տեղ չի նվաճի... □

Պ. ՀԱՅՐԻԿՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ինչպես նշված է վերեւում, առաջին անգամ չէ, որ ԱԻՄ-ի նախագահ, Գերագույն խորհրդի պատգամավոր Պարույր Հայրիկյանը քննադատաբար է արտահայտվում Ռամկավար ազատական կուսակցության մասին: Եւ դա նրա անբռնաբարելի իրավունքն է, ինչպես իրավունքն է բոլորի, պայմանավ, որ քննադատությունը լինի հիմնավորված եւ առարկայական: Մանավանդ՝ չլինի մակերեսային ու կանխակալ: Ու մեզ թվում է, թե մեր կուսակցության հասցեին պրն. Պ. Հայրիկյանի ուղղած սըլաքներն այդպիսին են. մակերեսային եւ ոչ հիմնավոր:

Նախ՝ Մոսկվայի հետ 70 տարի սիրաբանելու առասպելի մասին:

Ռամկավար ազատական կուսակցության եւ Խորհրդային Հայաստանի ղեկավարության միջեւ 70 տարվա տաք ու պաղ հարաբերությունների ընթացքում թե այլապես, չի եղել մի դեպք, երբ ՌԱԿ-ը կամ նրա ներկայացուցիչներից որեւէ մեկը հարաբերություն մշակած լինի Մոսկվայի հետ: Ճիշտ է, եղել են հանդիպումներ խորհրդային դեսպանատների բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ինչպես այլ երկրների դեսպանների հետ, սակայն դրանք ընդհանրապես եղել են պրոտոկոլային կամ տեղական բնույթի: Թերեւս բացառություն է կազմում 1960-ին ՌԱԿ-ի կենտրոնական վարչության ներկայացուցիչ Համբարձում Պերպերյանի հանդիպումը Խրուշչովի հետ, որի ընթացքում մեր ներկայացուցիչը պաշտոնապես ներկայացրել էր Ղարաբաղի ու Նախիջեւանի պահանջները:

Ընդհակառակը. Խորհրդային Հայաստանի ղեկավարության հետ ՌԱԿ-ի գլխավոր վեճերից մեկն է հանդիսացել կարեւորագույն հարցերում Մոսկվային դիմելու վերջինիս առաջարկը, որ կտրականապես մերժել է ՌԱԿ-ը, շարունակ հիշեցնելով, որ Հայաստանի իշխանությունները միշտ հանդես պետք է գան իբրեւ ազգային *պատասխանատու* իշխանություն, որի գլխի վրայով ՌԱԿ-ը չի ուզենա որեւէ կարգադրություն անել Մոսկվայի հետ...

Երկրորդ՝ Հայաստանի բոլշեւիկների հետ սիրաբանելու մեղադրանքի մասին: Հատակ պետք է լինի բոլորին, որ մինչեւ 1989 թվականի սեպտեմբեր ամիսը Խ. Հայաստանի իշխանությունների կողմից ՌԱԿ-ը չի ընդունվել իբրեւ կուսակցություն, այլ՝ նկատի են առնվել նրա ներկայացուցիչների ոչ կուսակցական տարբեր հանգամանքները, իբրեւ Թեքեյան մշակութային միության կամ Հայկական Բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչներ: Ավելին, բացի 1921-ին Արտակ Դարբինյանի փաստաբանական այցի ընթացքում Ալ. Միասնիկյանի եւ այլոց հետ նրա ունեցած հանդիպումներից, եւ հետագայում՝ Խաչեն Փափազյանի եւ ՌԱԿ-ի այլ պատասխանատուների՝ կաթողիկոսական ընտրությունների կամ ներգաղթի աշխատանքներին մասնակցելու համար թույլատրված այցելություններից, մինչեւ 1960-ական թթ. ՌԱԿ-ի ղեկավարներին Հայաստան այցելելու վիզա չի տրվել:

Թերեւս այսօր կարելի է ՌԱԿ-ի այն ժամանակների ղեկավարներին քննադատել այս ամենը հանդուրժելու համար: Սակայն պետք չէ մտահան անել, որ ՌԱԿ-ը հայկական իրականության մեջ առաջինն էր, որ իր գործունեության ընթացքում իրարից հստակորեն տարբերակել է ազգային մոտեցումը քաղաքական-գաղափարախոսականից: Եւ ազգային այդ մոտեցումը մեր ղեկավարներին թելադրել է, հակառակ գաղափարախոսական ու քաղաքական հիմնական եւ սկզբունքային տարբերությունների, ամեն կերպ պահպանել ինչ-որ մի պատուհան մայր երկրի ժողովրդի հետ հարաբերելու եւ սփյուռքում հայրենասիրության ու մայր հողին հասնելու երազանքը վառ պահելու համար: Եւ այդ պատուհանը, հայտնի է պրն. Հայրիկյանին անգամ, կարող էր բաց մնալ Հայաստանում իշխող կուսակցության միջոցով միայն:

Ճիշտ է, որ մեր կուսակցությունը Բեյրութում, Կահիրեում կամ Փարիզում ու Բոստոնում նստած՝ հրապարակային պայքար չի մղել եւ բեմերից ու մամուլից չի գոչել՝ «Դողա՛, Կրեմլ»: (Կրեմլը դողացնելու ուժը մենք չենք ունեցել. այն տրված էր ուրիշներին...): Ընդհակառակը, ՌԱԿ-ը միշտ էլ ընդդիմացել է բոլոր նրանց, ովքեր փորձել են բոլշեւիկյան իշխանության դեմ ապստամբության մղել մեր հայրենի ժողովուրդը, գիտակցելով, որ հեղաշրջական որեւէ շարժում պետք է սկսի նախ ինքը՝ Ռուսաստանը, առանց որի Հայաստանի Հանրապետության նմանօրինակ շարժումն առավելագույնը կարող էր միս հայթայթել Կարմիր բանակի հրաձգյորների համար:

Այսուհանդերձ, պրն. Պ. Հայրիկյանը լավ պետք է իմանա, որ ՌԱԿ-ի ղեկավարությունը առիթը բաց չի թողել ընդհանրապես խորհրդապահական եւ երբեմն էլ հրապարակային քննադատության ենթարկելու Խ. Հայաստանի ղեկավարությանը: Այս մասին շատ հարուստ է մեր կուսակցության արխիվը, չհաշված մամուլի այն բազմաթիվ ելույթները, որոնք կատարվել են ՌԱԿ-ի պատասխանատուների կողմից, սկսած 1923-ականներից, հասնելով մինչեւ 1934-ականները եւ այնուհետեւ, երբ Արշակ Զոպանյանն էր իր ազդու խոսքն ասում *«Անահիտի»* էջերում:

Հուսկ ապա՝ «հայրենի կառավարասիրության» մասին: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ մեր ժողովուրդը տիրապետեր չէ եւ թե անհրաժեշտ է նրան նաեւ այդ սովորեցնել, անհրաժեշտ է պրն. Պ. Հայրիկյանի եւ իր նման մտածողների հիշողությունը թարմացնել այն նվաճված մակարդակի շուրջը, որը եղել է ՌԱԿ-ինը, ինչ վերաբերում է ազգային գերագույն շահերին: Դա առաջնայինը երկրորդականից տարբերելու սովորակա՞ն՝ բայց շատերի մոտ հազվագյուտ հատկանիշ է, որին բարեբախտաբար տիրապետել է Ռամկավար ազատական կուսակցությունը: Եւ վաղու՛ց, դեռեւս այն ժամանակներից սկսած, երբ 1919-ին դուրս եկած լինելով Հայաստանի Հանրապետության կոալիցիոն կառավարության կազմից, ՌԱԿ-ը սկզբունքային ընդդիմության մեջ էր գտնվում այն ժամանակ Հայաստանում հեգեմոնիա հաստատած Հ. Հ. Դաշնակցության նկատմամբ, ինչը, սակայն պատճառ չդարձավ, որ 1920-ին ՌԱԿ-ը Եգիպտոսում անգլիական բանակից չգներ 21 ռազմօդանավ՝ դրանք Հայաստանի Հանրապետության բանակին տրամադրելու նպատակով, խորապես գիտակցելով, որ կարեւորը ժողովուրդն է, երկիրը եւ պետականությունը, որին պահող բանակ է պետք:

Եւ եթե սա համարվում է «կառավարասիրություն», ապա Ռամկավար ազատական կուսակցությունը իրեն պատիվ կհամարի այդ մեղադրանքի կրողը լինել:

Այսօր էլ մեր կեցվածքը մնում է նույնը՝ դրական դերով հանդես գալ հակասությունների եւ հակամարտությունների այս լաբիրինթոսում:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵԼԳԻԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՒՄ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՐԸ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՔՐԴԵՐԻՆ

Ինչպես հաղորդել էինք մեր նախորդ համարում, Բելգիայի խորհրդարանը մարտ ամսի 2-րդ շաբաթում ընդունել է մի բանաձեւ, որը վերաբերում է *«Թուրքիայի քուրդ բնակչության եւ այլ փոքրամասնությունների հարցին»*: Բանաձեւի մասին որոշում կայացնելուց առաջ ելույթ է ունեցել Ֆլաման գործիչ, ընկերվար-քրիստոնյա կուսակցության անդամ Հուգո վան Ռոնպեն, որի ելույթը խիստ կայրույթ է պատճառել Թուրք շրջանակներում:

Ռոնպեն խոսել է Սեւրի դաշնագրի մասին, եւ շեշտել է, որ այդ դաշնագրով քրդերին տրվում էր անկախ պետություն ունենալու իրավունք, սակայն Թուրք ղեկավար Մ. Քեմալ Աթաթուրքը արգելք է հանդիսացել դրա գործադրությանը: 1923 թվին Աթաթուրքը անդրադառնալով փոքրամասնություններին ասել է. *«Նա, ով կըտարյուն Թուրք չէ, նա կարող է միայն գերի ու ծառա լինել»*:

Երկրի վարչապետի եւ ամբողջ կառավարության ներկայությամբ տեղի ունեցած քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ որոշվել է ընդդիմանալ Թուրքիայի եւրոպական ընդհանուր շուկայի անդամակցությանը, այնքան ժամանակ, քանի դեռ երկրում (Թուրքիայում) չի ընդունվում քրդական մշակույթի ինքնությունը: Որոշումին կցվել է նաեւ քրդական հարցի լուծման համար միջազգային ժողով գումարելու կանկությունը:

Մի ընկերվար պատգամավոր խոսել է Մուսուլի ու Քերքուկի նկատմամբ Թուրքիայի ունեցած ախորժակների եւ քրդերի հանդեպ կիրարկվող շարչարանքների մասին, ավելացնելով, որ այս կայության մեջ քրդերը կարող են կորավիգ կանգնել PKK-ին (Քրդիստանի բանվորական կուսակցություն) ու սկսել քաղաքացիական պատերազմ:

Թուրքական մամուլը այս շեշտված հակաթուրք կեցվածքը համարում է հունական, հայկական եւ քրդական լոբբիների գործունեության արդյունք եւ նշում սրանց արժանի պատասխան տալու անհրաժեշտությունը: Նրանց հատուկ կայրույթ է պատճառել Աթաթուրքին վերագրվող վերոհիշյալ արտահայտությունը եւ Ռոնպեի *«Թուրքերին պետք է լավ դաս տալ»* արտահայտությունը: Նիստում առաջարկ է եղել նաեւ հետ կանչել Բելգիայում Թուրք դեսպանին. մինչ այդ, Թուրքիայի Ազգային ժողովի եւրոպական հասարակապետության հանձնախմբի նախագահը մի նամակով դիմել է Բելգիայի ներկայացուցիչների խորհրդի նախագահին ու վեց գլխավոր կուսակցությունների ղեկավարներին, որտեղ այդ ժողովը ամբաստանվում է Թուրքիայի ներքին հարցերին միջամուխ լինելու եւ հողային ամբողջականությունը վտանգելու հանցանքով: Մյուս կողմից, Բելգիայի թրքական շրջանակները պահանջել են, որ Ռոնպեն ներողություն խնդրի իրականությունը խեղաթյուրելու համար:

ՔՐԴԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 15-ին, Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում սկսվել են քրդական երկրորդ համագումարի աշխատանքները, որին մասնակցում էին քրդական կազմակերպություններից ու մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպություններից շուրջ 120 պատվիրակներ:

Այնտեղ, առաջին անգամ քրդական կազմակերպությունները մի ընդհանուր հայտարարություն են հրապարակել, որտեղ ներկայացնում են քրդերին որպես ազգ եւ ոչ թե որպես փոքրամասնություն ճանաչելու, նրանց ինքնորոշման, Միջին արեւելքի հարցերի շուրջ բոլոր ժողովներին մասնակցելու իրավունքի, նրանց դեմ Իրաքի օգտագործած քիմիական զենքերի եւ այդ զենքերը հայթայթող երկրների հրապարակման պահանջները:

Հայտարարությունը չի ստորագրել միայն PKK-ն (Քրդիստանի բանվորական կուսակցությունը), սակայն չի էլ հակառակվել դրան:

Համագումարի բացումը կատարել է Շվեդիայի քրդական իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Հերմանսոնը, որն ասել է. թե քրդերը մեծ պայքար են մղում եւ թե Միջին Արեւելքում խաղաղություն հաստատելու ճիգերը պայմանավորվում են այդ հարցի լուծումով: Ելույթ է ունեցել նաեւ Շվեդիայի օտարականների նախարարը, որը նշել է քրդերին իրենց ապրած երկրում ինքնավարություն շնորհելու անհրաժեշտությունը: □

digitised by A.R.A.R.@

ԻՐԱՔՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԴԱՆԱՎԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ. Իրանագետ

Ծոցի պատերազմի ընթացքում ռազմական ինքնաթիռների հոսքը դեպի Իրան Արեւմուտքում առաջ բերեց որոշակի անհանգստություն: Շատերին հետաքրքրում էր այն հարցը, թե որքա՞ն ինքնաթիռ է տեղափոխվել Իրան, եւ ի՞նչ նպատակով:

Իրանում տեղակայված իրաքյան ինքնաթիռների թվաքանակի վերաբերյալ կան հակասական տվյալներ: Պենտագոնը պնդում էր, որ 147 ինքնաթիռ է վայրէջք կատարել Իրանում: Փետրվարի 10-ին CNN հեռուստատեսային գործակալությանը տրված հարցազրույցի ժամանակ Իրանի արտգործնախարարը նշեց, թե Իրանում ապաստանել են ընդամենը 22 ինքնաթիռ: Մարտի 27-ին «Շպիգել» թերթի խմբագրի հետ ունեցած հարցազրույցում նույնը հաստատեց Իրանի հանրապետության նախագահ Ռաֆսանջանին, ավելացնելով, որ 22 ռազմական ինքնաթիռներից բացի Իրան են տեղափոխվել նաեւ ոչ ռազմական ինքնաթիռներ:

Իրանի արտգործնախարար Վելայաթիի հայտարարության հաջորդ օրը, Ավստրիայի հանրապետության նախագահի տեղակալը մամուլի ասուլիսի ժամանակ, վկայակոչելով Իրանի պատգամավորական հանձնաժողովի անդամների հայտարարությունը, նշեց, որ Իրանում պահվում են շուրջ 150 իրաքյան ինքնաթիռներ:

Ակնհայտ է, որ Բաղդադն իր օդային ուժերը փրկելու համար է դիմել նման քայլի: Սակայն Իրաքի եւ Իրանի միջեւ ինքնաթիռների հարցում նախնական պայմանավորվածության մասին երկուստեք աշխատում էին լռել: Առաջինը տեղի տվեց Իրաքի փոխվարչապետ Սաադուն Համմադին, խոստովանելով, որ իրաքյան ինքնաթիռները Իրան են տեղափոխվել երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն: Փետրվարի 12-ին Ալժիրում կայացած այդ ասուլիսի ժամանակ Ս. Համմադին նշեց, որ ինքնաթիռների տեղափոխումը բխում էր ռազմական անհրաժեշտությունից, որի նպատակն էր փրկել Իրաքի օդային ուժերը: Սակայն Իրանն այդ հարցի մասին աշխատում էր հանդես չգալ որեւէ հայտարարությամբ:

Ինքնաթիռների հարցում Իրանի գաղտնապահությունը խիստ կասկած առաջացրեց Արեւմուտքում: Ոմանք սկսեցին անհանգստանալ, որ միգուցե Թեհրանի եւ Բաղդադի միջեւ կան նաեւ այլ գաղտնի պայմանավորվածություններ: Այդ կարգի կասկածները փարատելու համար Ռաֆսանջանին փետրվարի 4-ին NBC հեռուստատեսային գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ հավաստիացրեց, որ Իրանը հավատարիմ է իր խոստումներին, եւ չեզոքության մասին հայտարարությունը միանգամայն լուրջ է: Ինքնաթիռների հոսքը դեպի Իրան,- ավելացրեց Ռաֆսանջանին,- կատարվել է մեր կամքից անկախ, եւ Բաղդադը մեզ հետ չի քննարկել այդ հարցը: Նույն ասուլիսի ժամանակ Իրանի ղեկավարը նշեց, որ սկզբնական շրջանում իրանական օդային ուժերը դիմադրում էին, սակայն չկարողացանք նրանց ետ մղել: Այնուհետեւ Ռաֆսանջանին հիշեցրեց, որ երկրորդ աշխարհամարտի ժամանակ շուրջ 300 ինքնաթիռ վայրէջք են կատարել Շվեյցարիայում, իսկ Շվեյցարիան մինչեւ պատերազմի ավարտն այդ ինքնաթիռները չվերադարձրեց, եւ ոչ ոք նրան չեզոքությունը խախտելու մեջ չմեղադրեց: Նույն հարցին, թե ինչո՞ւ Իրանը թույլ չի տալիս տգործնախարարը նշեց, թե Իրանում ապաստանել են ընդամենը 22 ինքնաթիռ: Մարտի 27-ին «Շպիգել» թերթի խմբագրի հետ ունեցած հարցազրույցում նույնը հաստատեց Իրանի հանրապետության նախագահ Ռաֆսանջանին, ավելացնելով, որ 22 ռազմական ինքնաթիռներից բացի Իրան են տեղափոխվել նաեւ ոչ ռազմական ինքնաթիռներ:

Իրանի արտգործնախարար Վելայաթիի հայտարարության հաջորդ օրը, Ավստրիայի հանրապետության նախագահի տեղակալը մամուլի ասուլիսի ժամանակ, վկայակոչելով Իրանի պատգամավորական հանձնաժողովի անդամների հայտարարությունը, նշեց, որ Իրանում պահվում են շուրջ 150 իրաքյան ինքնաթիռներ:

Ակնհայտ է, որ Բաղդադն իր օդային ուժերը փրկելու համար է դիմել նման քայլի: Սակայն Իրաքի եւ Իրանի միջեւ ինքնաթիռների հարցում նախնական պայմանավորվածության մասին երկուստեք աշխատում էին լռել: Առաջինը տեղի տվեց Իրաքի փոխվարչապետ Սաադուն Համմադին, խոստովանելով, որ իրաքյան ինքնաթիռները Իրան են տեղափոխվել երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն: Փետրվարի 12-ին Ալժիրում կայացած այդ ասուլիսի ժամանակ Ս. Համմադին նշեց, որ ինքնաթիռների տեղափոխումը բխում էր ռազմական անհրաժեշտությունից, որի նպատակն էր փրկել Իրաքի օդային ուժերը: Սակայն Իրանն այդ հարցի մասին աշխատում էր հանդես չգալ որեւէ հայտարարությամբ:

Ինքնաթիռների հարցում Իրանի գաղտնապահությունը խիստ կասկած առաջացրեց Արեւմուտքում: Ոմանք սկսեցին անհանգստանալ, որ միգուցե Թեհրանի եւ Բաղդադի միջեւ կան նաեւ այլ գաղտնի պայմանավորվածություններ: Այդ կարգի կասկածները փարատելու համար Ռաֆսանջանին փետրվարի 4-ին NBC հեռուստատեսային գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ հավաստիացրեց, որ Իրանը հավատարիմ է իր խոստումներին, եւ չեզոքության մասին հայտարարությունը միանգամայն լուրջ է: Ինքնաթիռների հոսքը դեպի Իրան,- ավելացրեց Ռաֆսանջանին,- կատարվել է մեր կամքից անկախ, եւ Բաղդադը մեզ հետ չի քննարկել այդ հարցը: Նույն ասուլիսի ժամանակ Իրանի ղեկավարը նշեց, որ սկզբնական շրջանում իրանական օդային ուժերը դիմադրում էին, սակայն չկարողացանք նրանց ետ մղել: Այնուհետեւ Ռաֆսանջանին հիշեցրեց, որ երկրորդ աշխարհամարտի ժամանակ շուրջ 300 ինքնաթիռ վայրէջք են կատարել Շվեյցարիայում, իսկ Շվեյցարիան մինչեւ պատերազմի ավարտն այդ ինքնաթիռները չվերադարձրեց, եւ ոչ ոք նրան չեզոքությունը խախտելու մեջ չմեղադրեց: Նույն հարցին, թե ինչո՞ւ Իրանը թույլ չի տալիս թղթակիցներին հանդիպելու իրաքցի օդաչուների հետ, Ռաֆսանջանին պատասխանեց, որ Իրանը նրանց նկատմամբ վարվում է ըստ գոյություն ունեցող միջազգային նորմերի: Օդաչուների հետ հանդիպելու հարցը,- ավելացրեց Ռաֆսանջանին,- չի քննարկվել, եւ դրա վերաբերյալ որոշում չի ընդունվել: Եթե օդաչուները ցանկություն հայտնեն, մենք դեմ չենք լինի:

Լոնդոնում հրատարակվող «Քեյհան» թերթը (փետրվար 21) Ռաֆսանջանիի եւ Վելայաթիի հայտարարություններում հակասություն է գտնում, նշելով, որ Իրանի հանրապետության նախագահի կարծիքով իրաքցի օդաչուները ռազմական տեխնիկան փրկելու համար են եկել Իրան, իսկ արտգործնախարարը պնդում է, որ նրանք քաղաքական ապաստան են խնդրել Իրանում: Իրականում այդ հայտարարությունների մեջ ոչ մի հակասություն չկա: Քանի որ Վելայաթին Բելգրադում հայտնել էր, որ օդաչուներից մի քանիսն են Իրանի կառավարությունից ապաստան խնդրել:

Ապրիլի 5-ին՝ ուրբաթ օրվա ավանդական ելույթի ժամանակ, Իրանի հոգեւոր առաջնորդ Խոմենին, խախտելով ինքնաթիռների հարցում իրանական կողմի լռությունը, խոստովանեց (բառացիորեն մեջբերում ենք Խոմենիի խոսքերը). «Նրանք (իրաքցիները-Գ. Ա.) իրենց ինքնաթիռները ուղարկում էին իրան եւ մեզանից սննդամթերք եւ դեղորայք խնդրում, եւ մենք այդ բանը կատարում էինք»:

Ըստ երեւույթին, թե՛ պատերազմի ժամանակ, եւ թե՛ մինչեւ պատերազմը՝ տրանսեական եւ քաղաքական շրջափակման պայմաններում, Իրանն Իրաքի համար ձեռք էր բերել արյունատար անոթի նշանակություն: Այդ հանգամանքը հնարավորություն էր տվել Իրանին թելադրելու իր պայմանները:

Ինչ խոսք, երկու կողմերի միջեւ եղել է նախնական պայմանավորվածություն, սակայն Իրանը դրանով չի խախտել իր կողմից հայտարարված չեզոքությունը:

□

«Պատմական իրադարձություն» կամ՝ Շեվարդնաձեն Խոմեյնիի ընդունարանում

Հայտնի է, որ 1988 թ. վերջերին Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ, լուսահոգի Իմամ Խոմեյնին, դիմելով Գորբաչովին, կոչ էր արել նրան մահմեդականություն ընդունել:

Նամակի բովանդակությանը ծանոթանալուց հետո Գորբաչովը Խոմեյնիի պատգամաբերներին խոստացել էր, որ հարմար առիթով պատասխանը կուղարկի:

Եւ այսպես, Իմամի մերձիման օրերին Գորբաչովի պատասխանը բովանդակող նամակը Շեվարդնաձեի ձեռամբ հանձնվեց հասցեատիրոջը:

Պատասխան նամակի հանձնման հանդիսությանը ներկա էր նաեւ Խոմեյնիի հատուկ սպասավորներից մեկը՝ Հոջջաթ ուլ-իսլամ Ռահիմյանը, որը թղթին է հանձնել այդ «պատմական իրադարձության» մասին իր տպավորությունները: Այդ նոթերն անցյալ տարվա ամռանը լույս են տեսել Իրանի կում քաղաքում հրատարակվող «Փասդար-է էսլամ» («Իսլամի պահապան») հանդեսում: Լոնդոնում պարսկերենով հրատարակվող «Քեյհան» թերթը այս տարվա փետրվարի 21-ի համարում վերատպել է Ռահիմյանի հուշագրությունը: Պահպանելով հեղինակի գրելաոճի առանձնահատկությունը, թարգմանաբար ներկայացնում ենք այն ձեր ուշադրությանը:

«Այն օրը, երբ ԽՍՀՄ արտգործնախարար պրն. Շեվարդնաձեն պիտի ընդունելության արժանանար Իմամ Խոմեյնիի կողմից, նվաստս սովորականի պես առավոտյան ճիշտ ժամը 8-ին ներկայացա ծառայության վայրը: Սակայն իմամը դեռ ընդունարանում չէր:

ԽՍՀՄ արտգործնախարարը Իսլամական հանրապետության արտգործնախարարության պաշտոնատար անձանց հետ կանգնած սպասում էր Իմամի հայտնվելուն: Ընդունելության համար երկու արտառոց բան էր տեղի ունեցել: Նախ՝ առաջին անգամ հատուկի համար մի քանի աթոռ էր դնվել, եւ հետո՝ Հաջ Իսան բոլորին թեյ էր հյուրասիրել, եւ հյուրերը կանգնած թեյ էին ըմբշխնում:

Թարգմանչից բացի, սենյակում էր նաեւ Իրանում խորհրդային դեսպանը: Շեվարդնաձեի մյուս ուղեկիցներն սպասում էին դրսում: Սպասողական ճնշող մթնոլորտ էր տիրում: Վերջապես Իմամը մոտավորապես ժամը 8:30, ճիշտ այնպես, ինչպես ցուցադրվեց հեռուստատեսությամբ, ներս մտավ, եւ անհապաղ, առանց կանգ առնելու ու մարդկանց դեմքերին նայելու, անցնելով ներկաների կողքով, թիկն տված նստեց իր մշտական տեղը: Հենց այդ պահին Խորհրդային Միության արտգործնախարարն էլ նստեց աթոռին:

Սովորաբար, երբ գտնվում ես ոչ ավանդական մի հավաքույթում, քեզանից անկախ կաշկանդվում ես, եւ միայն մի քանի կրտրուկ եւ անհանգիստ շարժումներից հետո ես կարողանում տիրապետել քեզ:

Արեւելքի գերուժի ներկայացուցիչը հանդիսացող Շեվարդնաձեն, որը հայտնի դիմակ տղա թուրք կնոջից՝ Մուստաֆա Թուրքեբը (հոդվածի սկզբում խոսքը նրա մասին է): Այս բոլորը վկայում եւ հավաստիացնում է Գորբաչովի «հորեղբայր» Աբդուլլա Թուրքեբը:

Հոդվածի հետ տպագրվել են նաեւ երեք լուսանկար՝ Գորբաչովի, նրա հոր՝ Մահմեդ Յակուբի նկարը պինվորական հագուստով եւ վերջինիս գերեզմանի մոտ Գորբաչովի եղբոր եւ հորեղբոր նկարը:

Վերոհիշյալ հոդվածի առաջաբան հուշումները եւ հիասթափության ալիքը մեծացավ «Խորհրդային Վրաստան» թերթի անցած տարվա օգոստոսի 20-ի համարում Թուրքիայի «Ադամ» հրատարակչության հայկական պրեզիդենտ Նապար Արսենի Բյուրամի (Ճանճիկյանի) հետ հարցազրույցի հրապարակումից հետո: Այլ հետաքրքիր տեղեկությունների կողքին պարոն Ճանճիկյանը մասնավորապես խոսում է նաեւ ԽՍՀՄ-ի պրեզիդենտի մասին.

«... Պերեստրոյկան մենք լավ գիտենք, պարոն Գորբաչովին մենք շատ ենք հարգում: Թուրքիայի թերթերից մեկում նույնիսկ գրվեց, որ Գորբաչովի հայրը թուրք է, իբր գերի է ընկել ու մնացել Ռուսաստանում, նույնիսկ «հոր» նկարը տպագրվեց: Իհարկե, շատերը դա լուրջ չընդունեցին, երեւի լրագրողի հերթական սենսացիա էր... դա մեկ մոտ ընդունված է...»:

Ի՞նչ է ստացվում: Եթե Թուրքիայում անակնկալ էր սպասվում:

Իմամը մի ոտքն լռելուց հետո, առանց որեւէ ձեւականության, երեք պարզ նախադասությամբ հայտնեց իր ափսոսանքը, որ Գորբաչովն այնպիսի կարեւոր խնդրի վրա, որը Իմամի նամակի հիմքն էր կազմում, պատշաճ ուշադրություն չի դարձրել:

Թարգմանիչը չէր հասցրել թարգմանել երրորդ նախադասությունը, երբ Իմամը վեր կացավ եւ շարժվեց դեպի իր սենյակը:

Սովորաբար, երբ Իմամը հայտնվում է իր կարոտյալներին, կամ հեռանում նրանցից, բոլորը հափշտակված գցվում են համբուրելու նրա աջը: Բայց այս անգամ, թե՛ ներս մտնելիս եւ թե՛ հեռանալիս, Իմամն իր վեհ եւ պատկառազդու տեսքով

այնպիսի բացառիկ եւ աննախադեպ իրավիճակ էր ստեղծել, որ ներկաներից ո՛չ մեկը չկարողացավ տեղից շարժվել, եւ բնականաբար ո՛չ մեկին չհաջողվեց նրա աջը համբուրել, առավել եւս՝ սեղմել»: □

...եւ այն մասին, թե ինչպես ենք հասկանում քաղաքականությունը

1989 թ. հունիսի 22-ի համարում թուրքական «Գյունեշ» («Արեւ») թերթը մի ընդարձակ հոդված տպագրեց պրեզիդենտ Գորբաչովի թուրքական ծագման մասին, ինչը հասավ Հայաստան, բավմապվեց ողջ հանրապետությունում:

Այդ «փաստաթուղթը» մեծ արձագանք գտավ «լայն» զանգվածների մոտ, քանզի սրանք կենտրոնի դրդմամբ կամ մասնակցությամբ կատարվող դեպքերի ու քաղաքական նենգախաղերի համար այլ պատճառներ ու մեկնաբանություններ չեն որոնում: Մատուցվողը հաշտընկալ է:

Հոդվածում ասվում է, որ Գյամուլ Հանեի Քելքի իլի Սոքյուրլ գյուղի բնակիչ, 92 տարեկան մարագյուլի վարպետ Մուստաֆա Թուրքեբը պրեզիդենտ Գորբաչովի եղբայրն է: Նրանց հայրը՝ Մահմեդ Յակուբին առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գերի է ընկել ռուսներին, հետո ամուսնացել ռուս կնոջ հետ: 87 տարեկան հորեղբայր Աբդուլլա Թուրքեբի ցույցմունքի համաձայն, այս պատմությունը բացվեց այն բանի հետեւանքով, որ նրանց ընտանիքին գյուղում կոչում են «Գորբաչովլար»: Նրանց երկու անգամ կանչել են միլիցիա (քարաքյուղլար), ցույցմունք տալու եւ պարզելու մանրամասնությունները: Մահմեդ Յակուբի եւ ռուս կնոջ ամուսնությունից ծնվել են երկու տղաներ, Ալի Օսմանը (Ալեքսեյ) եւ Մահմեդ Ալին (Միխայիլ), ազգանունները թուրքերեն: Հայրն ունի եւս մեկ տղա թուրք կնոջից՝ Մուստաֆա Թուրքեբը (հոդվածի սկզբում խոսքը նրա մասին է): Այս բոլորը վկայում եւ հավաստիացնում է Գորբաչովի «հորեղբայր» Աբդուլլա Թուրքեբը:



Մաղուանյարները՝ Սերգեյ ԲԻԼՈՍՅԱՆԻ

Հոդվածի հետ տպագրվել են նաեւ երեք լուսանկար՝ Գորբաչովի, նրա հոր՝ Մահմեդ Յակուբի նկարը պինվորական հագուստով եւ վերջինիս գերեզմանի մոտ Գորբաչովի եղբոր եւ հորեղբոր նկարը:

Վերոհիշյալ հոդվածի առաջաբան հուշումները եւ հիասթափության ալիքը մեծացավ «Խորհրդային Վրաստան» թերթի անցած տարվա օգոստոսի 20-ի համարում Թուրքիայի «Ադամ» հրատարակչության հայկական պրեզիդենտ Նապար Արսենի Բյուրամի (Ճանճիկյանի) հետ հարցազրույցի հրապարակումից հետո: Այլ հետաքրքիր տեղեկությունների կողքին պարոն Ճանճիկյանը մասնավորապես խոսում է նաեւ ԽՍՀՄ-ի պրեզիդենտի մասին.

«... Պերեստրոյկան մենք լավ գիտենք, պարոն Գորբաչովին մենք շատ ենք հարգում: Թուրքիայի թերթերից մեկում նույնիսկ գրվեց, որ Գորբաչովի հայրը թուրք է, իբր գերի է ընկել ու մնացել Ռուսաստանում, նույնիսկ «հոր» նկարը տպագրվեց: Իհարկե, շատերը դա լուրջ չընդունեցին, երեւի լրագրողի հերթական սենսացիա էր... դա մեկ մոտ ընդունված է...»:

Ի՞նչ է ստացվում: Եթե Թուրքիայում շատերը դա լուրջ չեն ընդունում, ինչո՞ւ ենք մենք ջանադրաբար գնում ինքնապակողմնորոշման ճանապարհով: Մի՞թե կենտրոնի թուրքամետ քաղաքականությունը մեկնաբանելիս այս պարզունակ ու հեշտամարս տեսակետներով կարելի է սահմանափակվել:

Ռուսական կայսրության շահերը միշտ էլ համընկել են թուրքերի (նույնն է՝ ադրբեջանցիների) շահերի հետ: Իսկ թե ինչպե՞ս են դարեր շարունակ թուրքերը կարողանում հաջողել այդ համընկեցումը, դա արդեն լրջորեն խորհելու հարց է: Այսօր մենք անկախ հայկական պետություն ենք ստեղծում եւ քաղաքականության դրժվարամատչելի լաբիրինթոսում իրավունք չունենք միամիտ ինքնախաբեությամբ բավարարվելու: Այդ նույն հաջողությամբ կարելի է թուրքական ծագումնաբանության մի ստվար շարան ստեղծել ռուսական բոլոր կայսրերի ու վարչապետների վերաբերյալ եւ ավարտած համարել կենտրոնի հետ ճշտվելիք մեր բարդագույն հիմնահարցերն ու հետագա հարաբերությունների գործը:

Ավելի հեշտ է Միխայիլ Գորբաչովին թուրք համարելը, քան թուրքերի հետ նրա համագործակցության իրական պատճառները որոշելն ու հայերի դեմ նյութվող դավերը կանխելու հնարավորություններ ստեղծելը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

«Փառքերը կը փոշիանան,
մարդիկ անհետ կը կորսուին,
բայց գիրքը կը մնայ դարէ դար»:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

ՅՈՒՍԱՏՈՒ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Մայր հայրենիքում սփյուռքահայ գրականության տպագրության եւ դասավանդման գործընթացն այսօր էլ հեռու է բավարար լինելուց: Ի՞նչ բարի ակնկալիք կա ապագայից: Այս հարցով «Ազգի» թղթակից ՌՈԶԵԹ ԱԼԵՄՅԱՆԸ դիմեց Երեւանի պետական համալսարանի խորհրդահայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ:

-Սփյուռքահայ գրականությունը դասավանդվում է բանասիրական ֆակուլտետում՝ ապագա գրականագետների եւ քննադատների խմբերի համար: Այժմ ծրագրում ենք հայ գրականության հորագույն շրջանի ընդհանուր դասընթացի մեջ ներգրավել սփյուռքահայ նշանավոր գրողների՝ Շահան Շահնուրին, Համաստեղին, Մնձուրուն, Շուշանյանին, Մուշեղ Իշխանին:

Կստեղծվի սփյուռքահայ գրականության կաբինետ՝ գեղարվեստական գրականության եւ պարբերական մամուլի հավաքածուներով, որն ուսանողներին եւ ասպիրանտներին հնարավորություն կտա կենտրոնացված ձեւով եւ առավել խորությամբ ուսումնասիրելու սփյուռքահայ գրականությունը: Ուզում ենք կաբինետը կոչել Վահան Թեքեյանի անունով:

Մեր ամբիոնը տպագրության է ներկայացրել սփյուռքահայ թատերգության ծավալուն ժողովածուն՝ «Ուսանողի մատենաշարով», սփյուռքահայ գրականության չորրորդ հատորը: Այստեղ հավաքված են առավել նշանավոր թատերագիրների (Մ. Իշխան, Մ. Հաճյան, Զ. Մելքոնյան, Ալ. Սարուխան, Վ. Աճեմյան) ստեղծագործությունները:

Նախատեսվում է առաջիկա տարիներին կազմել եւ հրատարակել հայ հորագույն շրջանի գրական քննադատության քրեստոմատիայի չորրորդ հատորը, ուր կընդգրկվեն նաեւ սփյուռքահայ քննադատության ընտիր նմուշներ:

Անձնապես ծրագրում եմ վերամշակել եւ նոր հեղինակներով լրացնել սփյուռք-հայ գրականության իմ դասագիրքը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.

Սփյուռքահայ գրականությունն ուսումնասիրվում է նաեւ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, փոքր ժամաքանակով դասավանդվում Երեւանի Ի. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Ինչ խոսք, քիչ է՝ 70-ամյա գրականության հարստությունների համեմատությամբ: Անմխիթարական է հատկապես նրա տպագրության գործի դրվածքը: Պարոն Գաբրիելյանի պատասխանը հուսադրող է՝ մեր ազգային, մեկ-միասնական գրականության մեջ արհեստականորեն, մինչեւ վերջերս քաղաքական նկատառումներով խրված սեպը վերացնելու ճանապարհին: ■

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՊՈԵՄԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի խորախորհուրդ մտքերը հասկանալու համար միջնադարում արդեն ստեղծվում է մեկնողական գրականություն, որի սկզբնավորման շրջանին է նվիրված Նարեկացիագետ Պողոս Խաչատրյանի վերջերս լույս տեսած *«Նարեկի միջնադարյան լուծմունքը»* (Երեւան, 1990, Երեւանի պետական հրամալսարանի հրատարակչություն) մեծարժեք գիրքը: Ուսումնասիրությունն ընդգրկում է 13-15-րդ դարերի մեկնողական դրսեւորումները:

Պ. Խաչատրյանը միջնադարյան գրական երեւույթների համակողմանի ուսումնասիրությամբ առանձնացնում է լուծմունքի առաջին նախնական օրինակն ու խմբագրությունները՝ նրանց հեղինակ ճանաչելով Կիլիկյան Հայաստանի հոգեւոր գործիչ Հակոբ Կլայեցուն: Բանասերը ճշտում է հետագա երկրորդ խմբագրության երեւան գալը բուն Հայաստանում, որին եւ հետեւում են երրորդ եւ չորրորդ խմբագրությունները: Գրքում զետեղված են այդ չորս խմբագրությունների համեմատական տախտակները, որոնք հնարավորություն են ընձեռում դիտարկել նրանց ընդհանրություններն ու տարբերակիչ գծերը: Բանասերը համոզիչ փաստերով վկայում է, թե Հակոբ Կլայեցու Նարեկլուծը չի ստեղծվել ամայի տեղում, այն նախապատրաստվել է Ներսես Լամբրոնացու Նարեկացու մատյանի մեկնությունը մասնակի ներկայացնող ավանդներով: Միջնադարյան մեկնիչներն անդրադարձել են պոեմի աղբյուրներին: Այս խնդիրը լուծմունքի հեղինակների հիմնահարցերից է, եւ նրանք բարեխղճորեն ու իրենց բազմագիտության սահմաններում առանձնացնում են Գր. Նարեկացու օգտագործած աղբյուրները: Դրանք են՝ առաջին հերթին Աստվածաշնչի Հին եւ Նոր կտակարանները, հին աշխարհի իմաստասերների եւ եկեղեցու նշանավոր հայրերի երկերը՝ Պլատոն, Փիլոն Երրայեցի, Եւսեբիոս Կեսարացի, Եպիփան Կիպրացի, Գրիգոր Նազիանցի, Գրիգոր Նյուսացի: Ընդհանուր կարգով վկայակոչվում են Դիոնիսիոս Թրակացին եւ նրա հայ մեկնիչները: Պ. Խաչատրյանը հիմնավոր ապացույցներով հավելում է այս ցանկը՝ Եզնիկ Կողբացի, Եղիշե, Դավիթ Անհաղթ, վարքագրական որոշ հուշարձաններ, Հովսեփ եւ Բարլաամի պատմություն եւ այլն:

Բանասերն առանձնացրել է միջնադարյան մեկնողական գրականության մեջ եղած մի կարեւոր հարցադրում՝ կապված հոգու եւ մարմնի փոխկապակցության եւ հակադրության ուսմունքի հետ, որով արտակարգ հարուստ է Նարեկացու գլուխգործոցը:

Բանասերը հատուկ ուշադրություն է դարձրել թե Նարեկացու եւ թե նրա երկի լուծմունքի հեղինակների օգտագործած քրվերի խորհրդավոր նշանակությանը: «Մատյանում» արտահայտված է այն միտքը, թե մարդու մարմինը բաղկացած է նույնքան մասերից, որքան տարին եւ օրերը:

Ուշագրավ ձեւով բանասերը դիտարկում է լուծմունքի հեղինակների գիտական համեստ մակարդակը Գր. Նարեկացու վիթխարի բազմագիտության պարագայում: Նարեկլուծի հեղինակները այս հանգամանքը գիտակցում էին, բայց եւ այնպես նրանց մեկնաբանությունները յուրովի ներկայացնում են ժամանակի ըմբռնումների մակարդակը:

Բանասեր Պ. Խաչատրյանն իր հետազոտությամբ հանգում է այնպիսի փաստավորված եզրահանգումների, որոնք լիովին նորություն են: Նա վկայակոչում է, թե ինչպես Գր. Նարեկացին հայերենի ու հունարենի այբուբենի որոշակի տառերի համադրությամբ արտահայտում է իր ծածուկ մտքերը: Այս պարագան եւս վկայում է բանաստեղծի հունարեն լեզվի իմացությունը:

Անհրաժեշտաբար Պ. Խաչատրյանն անդրադարձել է ավելի ուշ շրջանի նարեկացիագետների՝ հատկապես Հ. Նալյանի եւ Գ. Ավետիքյանի հետազոտություններին:

Պ. Խաչատրյանին հաջողվել է ստեղծել գրականագիտական յուրօրինակ կապ միջնադարյան մտածողության եւ արդի բանասիրական ըմբռնումների միջեւ: ■

Ի՞նչ են ստեղծագործում...

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆ.

Իմ գործն ավարտված չէ...

Ավարտել եմ *«Հսպիտացած վերք»* վեպի եռագրությունը եւ երրորդ հատորը հանձնել եմ հրատարակության: Գիրքը պետք է վերնագրեի երկրորդ հատորի խորագրով՝ *«Հովիտներս ամայացան»*: Այդպես էլ կանեմ վերամշակելիս: Սպասում էի իմ հավաքած բազմահազար փաստաթղթերի (հինգ երկրներից, վեց լեզվով) վիպականացմանը եւ ուրախ եմ, որ, ըստ գրախոս-գրադատների, գեղարվեստական արձակում դրանք արժանավայել տահունություն ունեն: Վիպականությունը չի խանգարել փաստագրության եւ փաստագրությունը՝ նյութի վիպականացման:

Իմ գործն ավարտված չէ: Բոլորովին ոչ: Ստեղծագործական տառապանքն սկսվում է հանկարծ ծագող որեւէ մտքի հետ, ու այն սրտում եւ հոգում մաս ես ածում քեզ հետ մինչեւ թղթին հանձնելը:

Ո՞վ էր այն հայուհին, որ դարձավ Երուսաղեմի մեկօրյա թագուհին, ապա լքեց գահը՝ տեսնելով ամուսին-արքայի արքունական խամաճիկ պատմուճանները, անմորուս դեմքը եւ հիասթափվեց:

Ո՞վ էր այն հայուհին, որ թշնամու թըրքաբարո կրքերին չհանձնվելու համար իրեն վայր նետեց Օկո ժայռից ու մահը գրկեց լեռան ստորոտում:

Քանի-քանի հայուհիներ իրենց գրկում պահպանեցին իրենց երեխաներին եւ կոհվեցին երկրաշարժի փլատակների տակ, կենդանի թողնելով իրենց ծագուկներին:

Եւ այն ուսուցչուհին, որ Կումայրի մանկապարտեզի մինչեւ վերջին անուշիկին փրկելուց հետո, մնաց փլատակների տակ:

Հայուհինե՞ր...

Նրանց մասին պիտի գրեմ:

Ընդամենը քսանմեկ պատմվածք. իմ հարսն այդքան տարեկան է: Ամեն մեկը մի գեղարվեստական կերպար, ամեն մեկը մի հերոսուհի ու դաստիարակչական կենդանի օրինակ:

Ես հավատում եմ, որ գրականությունն ունի *ամենից առաջ* գեղարվեստական ուժ եւ արժանիք, բայց *ամենից շատ* դաստիարակչական նշանակություն, այսինքն՝ ասելիքներ:

Սիրում եմ մեր պատմությունը, բայց երեւի ժամանակը չի ների անդրադառնալ նրա մեծ դրվագներից որեւէ մեկին. իսկ ժամանակակից պատմությունը, այն, որի մեջ ապրում եմ եւ որն անցնում է իմ էության միջով, դեռեւս գեղարվեստական նրստվածք չի տալիս ու ելք չի որոնում գրչի միջոցով երեւալու հայ ընթերցողին:

Ժամանակակից կյանքը, թող ներեն ընթերցողները, լոկ հրապարակախոսական արձագանքների, այսինքն հակամարտ մղքերի մի մեծ թնջուկ է իմ հոգում:

Երեւան
31 մարտի 1991 թ.

Գրականության նվիրյալը

«Իմ բաժակը երբեք ես կիսատ չեմ թողնում ու չեմ ասում ոչինչ կիսաբերան...»: Սա մի գիծ է Սաղաթել Հարությունյանի՝ բանաստեղծի, դրամատուրգի, գրական անխոնջ մշակի *«Ինքնանկարից»*: Սրան կարելի է նոր գունագծեր ավելացնել եւ, առաջին հերթին, իր պիեսի խորհրդանշական վերնագիրը՝ *«Միայն մարդն է ուղիղ քայլում»*: Բնության մեջ սա բացարձակ ճշմարտություն է, սակայն հասարակական կյանքում շատերը, դժբախտաբար, քայլում են կորացած մեջքով եւ ստրկամտորեն: Ս. Հարությունյանը նրանցից է, ովքեր իրենց ժամանակն ապրում են պատվախնդրությամբ եւ ուղիղ ու բաց աչքով նայում կյանքին ու մարդկանց: Հաճախ վիճող, բայց երբեք չհանձնվող, առերես անհաշտ ու հանդուգն, բայց խորքում մեղմ, բարի մի էություն է նա, որ

նրա հանդեպ եւ բարեկամների, եւ թշնամիների տածած հարգանքի պատճառն է:

Նրա ստեղծագործական կյանքն սկսվեց բանաստեղծությամբ ավելի քան հիսուն տարի առաջ եւ հետագայում, ինչպիսի ժանրերի էլ դիմեց, բանաստեղծությանը մնաց խոնարհ ու հավատարիմ: *«Իմ ծայնով»*, *«Ապրիլ»*, *«Թե ինչ է շշնջում առուն»*, *«Արեւ եւ ծով»*, *«Եթե քո աչքը պարզ է»* ժողովածուներում ռոմանտիկական ինչերանգներով երգեց ազնվությունն ու հայրենասիրությունը՝ իբրեւ մարդկային հոգու բարձր արժեքներ: *«Կյանքը սկուտեղի վրա»* վեպը, բազմաթիվ պատմվածքները ու վիպակները վավերական գույներով պատկերում են ժամանակակից մարդու հուզաշխարհը, նրա դժվարին, բայց լուսավոր հեռանկար ներփակող կյանքը:

Տարիներ շարունակ, Սաղաթել Հարությունյանի ջանքերն ուղղված են եղել նաեւ մամուլի եւ գրական կյանքի կազմակերպմանը, լինելով «Պիոներ» եւ «Միջեռնակ» հանդեսների խմբագիր, «Գրական թերթի» գլխավոր խմբագիր, վերջին տարիներին Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար՝ նա զգալի օգտակար աշխատանք է կատարել գրական ուժերի, տարբեր սերունդների համախմբման գործում:

Նա, ոմանց նման, երբեք չհազավ ուրիշի պատվաթիկնոցը, միշտ եղավ իր զգեստով, իրեն դիտեց ու ճանաչեց ներսից՝ ժպիտով ու իմաստնորեն վերաբերվելով եւ գովասանքին, եւ քննադատությանը:

Այսօր, իր յոթանասունամյա բարձունքից նայելով ետ, նա, շատերի հետ միասին, կարող է ասել, որ իր ապրած կյանքը իզուր չի անցել, եւ նաեւ գոհանալ այդ կյանքի լուսահետքերով:

մեծահասակներին, տարբեր կրքերի մարդկանց, որովհետեւ նա կարողացել եւ կարողանում է զգալ ընթերցողի կարկերակը: Վերջերս ամսագիրը հանդես եկավ նոր եւ օգտակար նախաձեռնությամբ՝ հիմնադրեց իր գրադարանը: Լույս է տեսել առաջին գիրքը՝ 20-րդ դարի ամերիկյան եւ համաշխարհային գրականության աստղերից մեկի՝ *Ուիլյամ Ֆոլքների «Հոր սեպտեմբեր»* պատմվածքների ժողովածուն: Ֆոլքները խոսում է մարդկային խորունկ հույզերից, դրանով իսկ կրթում ընթերցողի հոգին եւ բարձրացնում-հարստացնում նրան:

Ամսագրի նպատակը գեղեցիկ է՝ հայ ընթերցողին ներկայացնել մեր ազգային եւ համաշխարհային լավագույն ու անկրկնելի գեղարվեստական երեւույթները: Մինչեւ այս տարվա վերջը գրադարանը կհարստանա Հերման Հեսսեի, Ալբեր Քամյուի, Ֆրանց Կաֆկայի, Արթուր Ռեմբոի, Ներսես Շնորհալու, Օսիպ Մանդելշտամի, Խորխե Լուիս Բորխեսի ստեղծագործություններով: Դա կլինի մարդկության գեղարվեստական մտքի թռիչքը խորհրդանշող մնայուն արժեքների մի գրադարան: ■

գարուն

«Գարունը» ամենամասսայական եւ սիրված ամսագրերից է, մոտ ու հարազատ ոչ միայն հայ երիտասարդությանը, այլեւ

Էջի պատասխանատու՝ Նորայր ԱՂԱԼՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԻԽԱՅԻԼ ԲՈՉԱՐՈՎ.
«ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՄԵՋ ՀԱՅ ՉԻ ՏԱ»

ԽՍՀՄ եւ ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր, հայտնի տնտեսագետ, «Առաջադեմ դեմոկրատներ», «Դեմոկրատական Ռուսաստան» պատգամավորական խմբերի անդամ Մ. Բոչարովին ճանդիպեցինք ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների 3-րդ արտաքին համագումարի ավարտից հետո, եւ խնդրեցինք պատասխանել «Ազգի» հարցերին:

- **Հարգելի Միխայիլ Ալեքսանդրովիչ, որպես ՌԽՖՍՀ Գերագույն տնտեսական խորհրդի նախագահ, ի՞նչ եք կարծում, ո՞րն է Ռուսաստանի տնտեսական ճգնաժամից դուրս գալու ուղին:**

- Ճանապարհը մեկն է՝ առողջ բանականությունը: Տնտեսության մասին շատ չը-պետք է խոսել, այն պետք է ստեղծել: Դա է ամենակարեւորը: Իսկ մենք միայն խոսում ենք, հռչակում, թե պետք է ստեղծենք շուկա, բայց իրականում ոչինչ էլ չենք անում: Նախ, պետք է ստեղծենք այնպիսի նախապայմաններ, մշակենք այնպիսի մեխանիզմներ, որպեսզի չխանգարենք տնտեսության ազատ զարգացմանը: Կոպիտ ասած, այդ ճանապարհից պետք է հեռացնել բոլոր նրանց, ովքեր կխոչընդոտեն, թե՛ աջերին ու ձախերին, թե՛ կենտրոնականներին:

- **Ձեր կարծիքով այս համագումարը կօգնի՞ տեղից ինչ-որ բան շարժելու:**

- Կարծում եմ, համագումարի առաջին օրը ոչնչով չտարբերվեց վերջինից: Հենց սկզբից էլ ես դեմ էի այս համագումարին: Իրականում այստեղ ոչինչ չորոշվեց: Համագումարը մեզ հաց չի տա: Հետեւաբար, հարց է ծագում. «Ում էր ձեռնտու այս հերթական հավաքը»:

- **Երկրի վիճակը «կայունացնել» ցանկացողների՞ն:**

- Ինձ թվում է, համագումարն ավելի շատ ապակայունացնում է, քան շտկում իրավիճակը: Եվ եթե նայենք համագումարը հրավիրած այդ 300 պատգամավորների ցուցակին, կտեսնենք, որ դրանց մեծ մասը՝ 2/3-ը կամ շրջանային, քաղաքային, երկրամասային կուսքարտուղարներ են, կամ էլ խորհուրդների նախագահներ: Դրանց մեջ չնչին թիվ են կազմում արդյունաբերության բնագավառի աշխատողները:

Ուստի, շատ հետաքրքիր է, երբ երկրում սկսվում է գարնանացանը, իսկ վերոհիշյալ ընկերները հրավիրում են համագումար: Հետեւաբար, պարզ է նաեւ հարցի պատասխանը:

- **Իրոնիա դեմոկրատ, ինչպե՞ս եք գնահատում համագումարում դեմոկրատական թեւը ներկայացնող պատգամավորների աշխատանքը:**

- Դեմոկրատները ժողովրդի ձայնն են: Եվ նրանց առաջին օրվա հաղթանակը, նաեւ հաջորդ օրերի պայքարը, ցույց է տալիս, որ նրանք արտահայտում են ժողովրդի իղձերը: Ես միշտ էլ եղել եմ դեմոկրատական շարժման մասնակից, կանգնած եմ եղել այդ շարժման ակունքների մոտ եւ ցայսօր իմ գաղափարները որեւէ փոփոխություն չեն կրել: Տնտեսության բնագավառում իմ պահանջները դարձել են անչափ խիստ:

- **Ո՞րն է Ձեր խստության էությունը:**

- Գիտեք ինչ, ես կարծում եմ, որ այսօր մեզ պետք չեն օրենքներ, թեկուզ առաջիկա 2 տարիների ընթացքում: Տնտեսությունը մենք կարող ենք ստեղծել նաեւ դեկրետների ու հրամանների միջոցով: Իհարկե, կարեւոր է, թե ով կկանգնի դրանց հետեւում: Բայց, կարող եմ պնդել, որ շուկա ստեղծելու հնարավորություն ունենք: Ըստ իմ նոր ծրագրի, 5 տարվա ընթացքում կարելի է կայունացնել ռուբլու կուրսը: Սկզբունքորեն դա կարելի է անել նաեւ 3 տարվա ընթացքում: Այդ ծրագրում նշվում են այն բոլոր միջոցները, որոնք կկայունացնեն երկրի տնտեսությունը: Թվեմ դրանցից մի քանիսը. բնակարանային շուկայի, հողի, ձեռնարկությունների, կիսատ թողնված շինությունների շուկայի ստեղծում, դրամային զանգվածի կայունացում, բյուջեում փոփոխությունների մտցնում, կենտրոնացված աղբյուրներից ֆինանսավորման դադարեցում, անցում վարկային ֆինանսավորման: Վերջինս լայնորեն պետք է կիրառվի: Ամեն մի երիտասարդ պետք է կարողանա ստեղծել իր բիզնեսը: Շատ կարճ ժամանակաընթացքում պետք է ստեղծենք ձեռնարկատերերի այնպիսի բանակ, որը հետագայում մեզ թելադրի, ընդհուպ մինչեւ նոր օրենքների ընդունում: Ուստի, ձեռնարկատերերի ազատությունից է կախված նաեւ ազատ շուկայական հարաբերությունների զարգացումը:

- **Բայց այդ դեպքում չեն տուժի արդյո՞ք բնակչության թիչ ապահովված շերտերը:**

- Այդ մասին մտածել ենք նախօրոք: Քիչ ապահովված բնակչության պաշտպանությունը կլինի զգալի: Նախ կստեղծվի լրացուցիչ շուկա եւ ամեն ինչ ոչ թե կբաժանվի, այլ՝ սկսած հողից կվաճառվի: Այնուհետեւ, կկիրառվի նաեւ վարկային համակարգը: Մարդիկ կկարողանան երկարատեւ վարկ վերցնել, այդ թվում մեքենա, բնակարան, հեռուստացույց եւ այլն:

- **Դա կխթանի՞...**

- Այո, նման միջոցառումները կխթանեն, որպեսզի քաղաքացին գնի նորը: Այս հարցում մենք ոչինչ չպետք է հորինենք: Համաշխարհային տնտեսության մեջ վաղուց ամեն ինչ հորինված է: Միայն պետք է մեխանիզմ, առանց որի առաջ շարժվելու հնարավորություն չի լինի: Ուստի ես կըցանկանայի, որ այս հարցում Հայաստանը մեզ աջակցեր:

- **Մեզ մոտ արդեն կատարվում է այդ պնցումը:**

- Շատ ուրախ եմ եւ հուսով եմ, որ համատեղ տնտեսական փոխօգնության միջոցով մեր հանրապետությունները կմտնեն համաշխարհային շուկա: Իսկ դրա համար արդեն կան նախապայմաններ:

Զրույցը վարեց
ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ

ԿԱՊԱՆ-ԳՈՐԻՍԻ ՄԻՋԱԴԵՊԸ

Ապրիլի 7-ին տեղի ունեցած Կապան-Գորիսի միջադեպը մեկնաբանում է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտպանության հանձնաժողովի քարտուղար ԳԵՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ:

Վերջին ժամանակներս մեր հանձնաժողովի անդամների Մոսկվա եւ Անդրկովկասյան զինվորական օկրուգ այցելությունները ցույց տվեցին, որ խորհրդային բանակի ղեկավարությունը դժկամությամբ է համաձայնվում ու համակերպվում այն մտքին, որ հայ երիտասարդները ծառայեն Հայաստանի տարածքում տեղաբաշխված բանակի զորամասերում: Հակառակ դրան՝ հարեւան հանրապետությունում խորհրդային 4-րդ բանակի կազմում զորակոչվածների թիվն արդեն անցնում է 40, երբեմն 60 տոկոսից: Նրանց տարածքում գործող ռազմական ուսումնարաններից մեկը գրեթե ամբողջովին համալրված է իրենց ազգության ներկայացուցիչներով: Սրանք 4-րդ խորհրդային բանակի շարքերում նրանց տված զենքը փաստորեն օգտագործում են հայերին տեղահանելու նպատակով: Այժմ լուրջ վտանգ է կախված Գետաշենի, ամբողջ Շահումյանի շրջանի վրա: Արցախի շրջափակմանը գումարվել է նաեւ այդ ռազմական վտանգը: Այդ հսկայական ուժին մենք հակադրում ենք մեր ներքին գործերի նախարարության հատուկ ստորաբաժանումները, որոնք կոչված են պահպանելու մեր սահմանամերձ գյուղերի բնակչության անվտանգությունը եւ Հայաստանի հանրապետության սահմանները: Այդպիսի դեմ հանդիման կանգնած ուժերի միջեւ է տեղի ունեցել հերթական բախում Գորիսից Կապան տանող մայրուղու վրա, Շուռնուխ գյուղի մոտ, ապրիլի 7-ի երեկոյան: Պարզապես անուղղակի այստեղ այն է, որ եթե առաջ ադրբեջանցի ՕՄՕՆ-ականներն էին հարձակվում, հիմա այդ սադրանքներին մասնակցում են խորհրդային բանակի զինվորները: Տեղեկություն ենք ստացել, որ հակառակ կողմից սպանված է մի սպա, որը վերջը ստացել է թիկունքից: Դեպքի վայրում աշխատում է հանձնաժողով: Մեր կողմից վիրավորների թիվը նախնական տեղեկությունով 7 հոգի է, հակառակ կողմինը ավելի շատ են:

Գ. ԽԱԺԱԿՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Միավորված ազգերի կազմակերպության վերահսկող վորախմբերը, որոնք տարածվելու են Իրաքի եւ Քուվեյթի սահմանում, համալրվելու են հարավային Լիբանանի, Կիպրոսի եւ Սիրիա-Իսրայել սահմանում գտնվող ՄԱԿ-ի խաղաղարար վորքերից:

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՔՐԴԵՐԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԾՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ԱՆԿԱՐԱ.- Ջալալ Թալաբանիի եւ Մուհսին Դիապիի մարտի 8-ին Անկարա կատարած այցի արձագանքները դեռ շարունակվում են: Միաժամանակ տեղի են ունենում սադդամյան վարչակարգի հալածանքներից փախչող քրդերի եւ իրաքյան թուրքմենների նոր կուտակումներ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում: Ստացած տեղեկությունների համաձայն թուրքմեններից շուրջ 3 500 հոգի օրերս անցել են Թուրքիա, իսկ ինչ վերաբերում է քրդերին, ապա սահմանը նրանց առաջ առայժմ փակ է մնում: Այդ բոլորի հետ մեկտեղ չեն դադարում նաեւ Թուրքիայի հարավ-արեւելյան սահմաններում կինված ընդհարումները թուրական վորքերի եւ Քրդիստանի բանվորական կուսակցության «PKK»-ի ջոկատների միջեւ:

«*Հյուրրիյեթը*», ապրիլի 2-ի համարում հաղորդում է, որ վերջերս «PKK»-ի գրոհայիններից շուրջ 50 մարտիկ խախտելով Թուրքական սահմանը՝ Շիրնաքի շրջանում ընդհարվել են սահմանապահ վորքերի հետ: Եռօրյա ընդհարումների ժամանակ գրոհայիններից 25-ը կոհվել են, իսկ մյուսները դիմել փախուստի դեպի Իրաք՝ սպանելով 4 կինվորի:

ԱՆԿԱՐԱ, «Հյուրրիյեթ», ապրիլի 2.- Ջալալ Թալաբանին մասնակցել է թուրքական հեռուստատեսության «32-րդ օր» ծրագրին, որը վարում է Մեհմեդ Ալի Բիրանդը: Պատասխանելով Բիրանդի հարցերին՝ նա ընդունել է, որ Քրդիստանի հայրենասերների միությունը կապ է պաշտպանում «PKK»-ի հետ: «*Սակայն դա,*- ընդգծել է Թալաբանին,- *չի նշանակում, թե մենք բաժանում ենք «PKK»-ի բոլոր տեսակետները*»: Թալաբանիի կարծիքով Քրդիստանի հայրենասերների միությունը Իրաքում փորձում էր քրդական հարցի լուծմանը հասնել խաղաղ ճանապարհով եւ նախապատվությունը տալիս է քաղաքական միջոցներին, իսկ «PKK»-ն նախընտրում է պայքարի վինված ձեւը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱԿՏԸ

Երեկ, ապրիլի 9-ին, Վրաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը, իր արտահերթ նստաշրջանում քննարկում էր «Վրաստանի պետական անկախության վերականգնման ակտը»:

Այդ փաստաթղթում մասնավորապես արտահայտված է, որ «հենվելով հանրապետության անկախության հարցին նվիրված մարտի 31-ի հանրաքվեի արդյունքների վրա, Գերագույն խորհուրդը հայտարարում է Վրաստանի անկախության վերականգնումը, հիմք ունենալով 1918 թվականի մայիսի 26-ի անկախության մասին ակտը»:

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՎՈՐ ՀԱՆՔԱՓՈՐԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

ԱՊՐԻԼԻ 8: Այսօր Կուզբասում գործադուլին մասնակցում են 91 հանքափորային ձեռնարկություն: Բացի այդ, 9 հանքեր աշխատում են, սակայն ածուխ չեն բեռնում, իսկ 12-ը բեռնում եւ ուղարկում են միայն շրջան, կարիքների համար:

«*Մետաղագործներին եւ էներգետիկ օբյեկտներին ածուխով ապահովելու հարցերը միշտ գտնվում են բանվորական կոմիտեների խորհրդի տեսադաշտում,*- նշեց Կուզբասի շրջանային գործադուլային կոմիտեի ներկայացուցիչ Ալեքսանդր Վերշինինը:- *Նրանց ածխի բեռնումը չի դադարեցվում: Իսկ այնտեղ, ուր փչացել են մարտենյան վառարանները, լոկ սաբոտաժի հետեւանք է: Դա ձեռնարկությունների առանձին ղեկավարների մեղքն է*»:

Վորկուտայի հանքափորների տնտեսական պահանջները, որոնք գերակշռում էին մարտ ամսին, անցնում են երկրորդ պլան: Կենտրոնական տեղ են սկսել զբաղեցնել քաղաքական պահանջները, որոնք համընկնում են երկրի մյուս շրջանների հանքափորների առաջ քաշած պահանջներին. ԽՍՀՄ պրեզիդենտի եւ Գերագույն խորհրդի հրաժարականներ, իշխանության հանձնումը Ֆեդերացիայի խորհրդին եւ այլն: Վորկուտայի բանվորական կոմիտեի փոխնախագահ Վյաչեսլավ Տուկանի խոսքերով՝ այդ «արժեքների վերագնահատությունը» տեղի ունեցավ Վորկուտայի հանքափորների պատվիրակության Մոսկվա կատարած ուղեւորությունից հետո: Նրանք եւ երկրի գործադուլային մյուս շրջանների ներկայացուցիչները հանդիպում ունեցան վարչապետ Վ. Պավլովի հետ, որի ժամանակ «*Ներկայացման ռեժիսյորը Պավլովն էր, իսկ գլխավոր դերակատարը՝ Շչադրոն*»:

Վ. Տուկանը հաղորդեց, որ այսօր Վորկուտայի 13 հանքերից գործադուլին մասնակցել են 11-ը: Նրանցից 3-ը աշխատում են քաղաքի կարիքների համար:

Չեն դադարում հանքափորների գործադուլները Ուկրաինայում: «*Այսօր չեն աշխատում 47 ձեռնարկություններ,*- հաղորդեց ածխային արդյունաբերության հանրապետական կոմիտեի ղեկավարներից մեկը՝ Նիկոլայ Սուրգայը:- *Հանքափորները բավարարված չեն կառավարության որոշումներից: Նրանք պահանջում են լրիվ փոխհատուցում պարապուրդի համար եւ կից ձեռնարկությունների ծախսերի ծածկում: Անլուծելի են մնում հանքափորների քաղաքական պահանջները, որոնք ինչպես հայտնի է, կառավարությունը ընդհանրապես հրաժարվել է քննարկել*»: □

54 ԱՐԱՐԱՏ ԴՆԵՊՐ՝ 1:0

Բարձրագույն խումբ, VI տուր

ԵՎԳԵՆԻ ԿՈՒՋԵՐԵՎՄԿԻ
(«Դնեպր»ի մարզիչ)

«Մեր տղաները միանգամայն անճանաչելի էին, չգիտեմ, թե պատճառն ինչն էր: Համենայն դեպս «Արարատ»ի հաղթանակը օրինաչափ էր: Դաշտի տերերը գերազանցեցին մեզ թե խաղը կազմակերպելու ունակությամբ, թե գոլային պահերով»:

ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ

«Շատ ծանր խաղ էր: Առաջատարների շարքում ամրապնդվելու համար մեզ անպայման հաղթանակ էր պետք, մանավանդ, որ հաջորդ երկու տուրերում մեզ լուրջ փորձություններ են սպասում: Օղակների համագործակցությունից, այս անգամ գոհ եմ»:

Մյուս խաղերի արդյունքները.

Դինամո (Մ) - Դինամո (Մն)՝ 1:1
ԲԿՄԱ - Զերնոմորեց՝ 4:3
Պամիր - Տորպեդո՝ 0:0
Պախտակոր - Լոկոմոտիվ՝ 1:0
Մետալուրգ - Շախտյոր՝ 0:0
Դինամո (Կ) - Մետալիստ 1:1

Ալբերտ Սարգսյանը բացում է հաշիվը

Բարձրագույն խումբ
ապրիլի 9-ի դրությամբ

		Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1.	ԲԿՄԱ	6	6	0	0	17-5	12
2.	Արարատ	7	4	1	2	4-4	9
3.	Շախտյոր	7	2	5	0	6-3	9
4.	Դնեպր	6	3	1	2	4-3	7
5.	Տորպեդո	6	2	3	1	8-5	7
6	ՄետալուրգԶ.	6	2	1	3	4-6	5
7.	Մետալիստ Խ.	6	2	1	3	5-8	5
8.	Զերնոմորեց	6	1	3	2	7-6	5
9.	Դինամո Կ.	5	1	3	1	5-6	5
10.	Պամիր	6	0	5	1	1-2	5
11.	ՍպարտակՄ.	3	2	0	1	4-3	4
12.	Դինամո Մն.	6	1	2	3	6-7	4
13.	Պախտակոր	5	1	2	2	4-5	4
14.	Լոկոմոտիվ	6	1	2	3	5-9	4
15.	Դինամո Մ.	6	1	2	3	5-9	4
16.	ՍպարտակՎ.	5	0	3	2	4-8	3

ԱԶԳ եռօրյա թերթ. հասցեն՝ Երեւան 375010, Ալավերդյան 47
հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941
AZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010
phone: 58-18-41, fax: (8852)562941

Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor H. AVEDIKIAN

Կոմպյուտերային հրատարակություն
Լույս է տեսնում չորեքշաբթի, շաբաթ
Դասիչ՝ 69149 Գինը՝ 30 կոպ.

MAC

Տպագրված է ՀԿԿ ԿԿ հրատարակչության տպարանում

digitised by A.R.A.R.@